Ուսուցչի ձեռնարկ

13

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

Ամրացնել փոխհարաբերությունները որպես քրիստոնյա

ԽՈԼՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

Ամրացնել փոխհարաբերությունները որպես քրիստոնյա

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
Ամրացնել փոխհարաբերությունները որպես քրիստոնյա
Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *Personal Relationships with Others, 5th edition* վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈՒՆՔՅ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 10-2022

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

Առողջ ընկերություն զարգացնելը նորադարձ քրիստոնյայի կյանքի ամենակարևոր ասպարեզներից մեկն է: Բացասական ընկերոջ ազդեցությունը շատ ուժեղ կարող է լինել բազմաթիվ նորադարձ քրիստոնյաների կյանքում: Դրա հետ կապված խնդիրներ են առաջանում նաև, երբ հարցը վերաբերում է հակառակ սեռի հետ փոխհարաբերություններին, ժամադրությանն ու ամուսնությանը: Նորադարձ քրիստոնյաները պետք է հստակ տեսնեն Աստծո առաջնորդությունը, թե ինչպես պետք է վարվեն իրենց կյանքի այս ասպարեզում:

1

Գլուխ 1. Ի՞նչ տեսակի ընկեր եմ ես

Այս գլխում մենք փորձում ենք պատասխանել երեք մեծ հարցերի: Ինչպիսի՞ն է ընկերության՝ վերաբերյալ քո անձնական պատմությունը: Ինչպիսի՞ ընկեր ես դու մյուսների համար: Ինչքանո՞վ ես դու լավ հասկանում առողջ ընկերության վերաբերյալ Աստծո տեսակետը:

2

Գլուխ 2. Ընկերության չորս տեսակներ

Մենք այստեղ ուսումնասիրում ենք ընկերության չորս տեսակներ՝ ծանոթներ, սովորական ընկերներ, մոտիկ ընկերներ և մտերիմ ընկերներ: Դրանցից ամեն մեկի համար մենք նայում ենք, թե դու ինչ ազատություններ և պատասխանատվություններ ունես տվյալ մակարդակում:

3

Գլուխ 3. Ինչպես լինել Աստծո տնտես

Մենք ուսումնասիրում ենք, թե ինչպես կարող են հավատացյալները լավագույնս օգտագործել Աստծո տված բարիքները: Քննարկվող հիմնական ասպարեզներն են՝ մեր ժամանակը, ընդունակությունները և անձնական ունեցվածքը:

4

Գլուխ 4. Սեռական փոխհարաբերություններ և քրիստոնեական կյանք

Այս գլխի հիմնական նպատակը կողմնորոշվելն է, թե ինչպիսին պետք է լինի հավատացյալի վերաբերմունքը սեռական կյանքի հանդեպ: Այս գլխի առաջին հատվածը վերաբերում է սեռական կյանքին և չամուսնացած մարդուն: Երկրորդ հատվածը վերաբերում է ժամադրությանը: Մենք ուսումնասիրում ենք ժամադրության նպատակը, ինչպես նաև՝ ժամադրության օգուտներն ու վտանգները: Գլխի երրորդ հատվածն ուսումնասիրում է Աստծո տեսակետն ամուսնության վերաբերյալ:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ -ի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք, ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Սեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *«Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար»* գիրքը:

Դասի ծրագրեր
ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասընթացի ընդհանուր նկարագրություն

1. Այս դասընթացը վերաբերում է նորադարձ քրիստոնյաների՝ կյանքի ամենամեծ մարտահրավերներ պարունակող ասպարեզներից մեկին, հատկապես նրանց, ովքեր մեծացել են կախվածություն կամ կյանքը կառավարող այլ խնդիրներ ունեցող ընտանիքներում: Շատերը մեծացել են անառողջ (դիսֆունկցիոնալ) ընտանիքներում, և մարդկանց հետ նրանց անձնական փոխհարաբերությունները թե՛ ընտանիքի անդամների, թե՛ ընկերների հետ անառողջ են: Նրանց համար մեծ մարտահրավեր կլինի առողջ փոխհարաբերությունների ուղու վրա տեղափոխվելը: Այս դասընթացը չի կարող նշված թեմաների վերաբերյալ սովորեցնել այն ամենը, որոնց անհրաժեշտությունը նրանք ունեն, այնպես որ կարիք կլինի դրանցից մի մասը անցնել մյուս դասընթացների ժամանակ, հատկապես՝ «սեռական կյանքն ու չամուսնացած մարդը», «ժամադրություն և ամուսնություն» թեմաները:

2. Առաջին դասաժամից մեկ կամ երկու օր առաջ դու կարող ես այս դասընթացը ներկայացնել ուսանողներին և տալ առաջին հանձնարարությունները: Եթե հնարավոր է, բաժանի՛ր Ուսուցման ուղեցույցն այս դասընթացն ուսուցանելուց մեկ կամ երկու օր առաջ: Ուսանողի ձեռնարկը կարող ես բաժանել հիմա: Դու կարող ես նրանց հանձնարարել, որ կարդան 1-ին գլուխը, քանի որ այն քննարկվելու է առաջին դասաժամին:

3. Հաջորդ էջում կա *Դասարանական հանձնարարության ցուցակի* մի օրինակ, որտեղ նշված են ամսաթվերը, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող նրանք լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող՝ *Դասարանական հանձնարարության ցուցակի* դատարկ օրինակը:

4. Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլխում ժամադրության վերաբերյալ մի հատված կա: Որոշ երկրներում ժամադրության գաղափարը տարբերվում է ԱՄՆ-ում ընդունված սովորություններից: Դու կարիք կունենաս ինչ-որ չափով դրանք որդեգրելու, սակայն համոզվի՛ր, որ պահպանում ես այս թեմայի վերաբերյալ աստվածաշնչյան սկզբունքները:

5. Մի թեմա, որն այս դասընթացում չի արծարծվում, խզված փոխհարաբերությունների վերականգնումն է: Կարևոր թեմա է, սակայն այն կարիք կլինի անցնել մեկ այլ տեղում: Դու կարող ես նշել փոխհարաբերությունների հետ կապված ևս մի քանի թեմաներ, որոնք կարող էին այստեղ ներառված լինել: Այս դասընթացը կազմելու խնդիրներից մեկն այն էր, որ պետք է քչացնեինք այն թեմաների թիվը, որոնց անդրադառնալու էինք այս դասընթացում: Մեր առաջնային նպատակը հիմնական մեկնարկային կետ ապահովելն է, որպեսզի կարողանանք այնպիսի փոխհարաբերություններ զարգացնել, որոնք կփառավորեն Աստծուն: Դու կարող ես այս թեմաներից մի մասին ավելի մանրամասն անդրադառնալ ***Անձնական ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար***, կամ՝ ***Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*** դասընթացների դասերին:

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի վերնագիրը. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

Հարցաշարեր

Անգիր համարներ	Ամսաթիվ
1. Փիլիպպեցիներին 4:8	օր 2.
2. Մատթեոս 19:5	օր 3.
3.	

Նախագծեր

	Ամսաթիվ
1.	օր 1.
2.	օր 2.
3.	օր 3.
4.	օր 4.
5.	օր 4.
6.	օր 4.
7.	
8.	

Ստուգարք. Ամսաթիվ օր 5.

Դասի ծրագիր 1.
Ի՞նչ տեսակի ընկեր եմ ես

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

   Ես պետք է ազնվորեն զննեմ, թե ինչպես են փոխհարաբերություններն ազդել իմ կյանքի վրա մինչև այս պահը:

2. **Բանալի համար. Առակաց 13:20.**

   «Իմաստունների հետ քայլողը իմաստուն կլինի, իսկ անմիտներին ընկերակցողը կկործանվի»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

   Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 1-ինը՝ «Ընկերներ», նույնպես կօգտագործվի այստեղ:

4. **Դասի ջերմացման գործողություն** (3-5 րոպե):

   Այսօրվա դասը սկսի՛ր ընկերների մասին պատմությամբ:

   Ա. Դա կարող է լինել պատմություն քո ընկերներից մեկի մասին, որը դրական ազդեցություն է թողել քո կյանքում:

   Բ. Դու կարող ես օգտագործել Թին Չելենջն ավարտած ինչ-որ մեկի տեսագրությունը, որը պատասխանում է հետևյալ հարցին. «Ինչպե՞ս է փոխվել քո ընկերական շրջապատը հիմա, երբ դու քո կյանքը տվել ես Հիսուս Քրիստոսին»:

   Գ. Դու կարող ես կենդանի հարցազրույց ունենալ Թին Չելենջն ավարտած ինչ-որ մեկի հետ, որը կպատասխանի հետևյալ հարցին. «Ինչպե՞ս է փոխվել քո ընկերական շրջապատը հիմա, երբ դու քո կյանքը տվել ես Հիսուս Քրիստոսին»: Եթե հնարավորություն լինի, որ Թին Չելենջն ավարտածը գա հարցազրույցի համար, դու կարող ես այդ հանգամանքն օգտագործել այսօրվա դասի մի քանի կետերում, որպեսզի նա նշի, թե ինչպես է իր ընկերական շրջապատը փոխվել Քրիստոսին անձամբ ճանաչելուց հետո:

1

5. **Ներկայացրո՛ւ մարդկանց հետ փոխհարաբերություններ ունենալու վերաբերյալ դասընթացը** (2-3 րոպե):

Համառոտ նկարագրի՛ր այն հիմնական թեմաները, որոնք անցնելու եք այս դասընթացին: Մի՛ հապաղիր ասել, որ այս դասընթացը չի կարող ընկերության վերաբերյալ սովորեցնել այն ամենը, ինչը նրանք կարիք ունեն իմանալու, սակայն կտա հիմնական մեկնարկային կետեր, թե ինչպես հավատացյալը պետք է վարվի իր կյանքի այս ասպարեզում:

Մատնանշիր, որ մենք միայն հակիրճ կերպով կանդրադառնանք հակառակ սեռի հետ շփման թեմային 4-րդ գլխում: Սեռական հարաբերություններն ու միայնակ մարդը և ամուսնությունն ինքնին կարող էին առանձին դասընթացներ լինել: Քո ուսանողներին քաջալերիր այս ասպարեզներում հավելյալ ուսումնասիրություն կատարել ամիսներ առաջ: Եթե այս թեմաներից որևէ մեկի վերաբերյալ դու ապագայում արդեն լրացուցիչ դասեր ունես ծրագրված, լավ կլիներ նրանց տեղեկացնել, թե ինչ հնարավորություններ նրանք կունենան ապագայում այս ասպարեզներն ուսումնասիրելու համար:

Անձնական ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասերը նույնպես հնարավորություն կընձեռեն, որպեսզի հետագա շաբաթների ընթացքում ավելի մանրամասն ուսումնասիրեն այս դասընթացում քննարկվելիք բոլոր թեմաները:

Այսօրվա դասը ներկայացնելիս մատնանշի՛ր, որ երբ խոսում ենք մարդկանց հետ անձնական փոխհարաբերություններ ունենալու մասին, մենք ներառում ենք թե՛ ընտանիքի անդամներին, թե՛ ընկերներին: Ընտանիքից դուրս ընկերների հետ փոխհարաբերություններ զարգացնելը մեծ ազդեցություն է կրում այն հանգամանքից, թե ինչպես ենք մենք սովորել փոխհարաբերություններ զարգացնել ընտանիքի ներսում:

Այսօրվա դասն ուսուցանելիս ուշադի՛ր եղիր Ուսանողի ձեռնարկի 1-ին գլխի երեք հիմնական բաժիններին և կողմնորոշվի՛ր, թե որքան ժամանակ ես դու հատկացնելու դրանցից յուրաքանչյուրին: Տարբերակներից մեկը դրանցից յուրաքանչյուրին հավասարաչափ ժամանակ տալն է. գրեթե 12-15 րոպե՝ ամեն մեկին:

Ա. Փոխհարաբերությունների քո անձնական պատմությունը:

Բ. Ինչպիսի՞ ընկեր ես դու մյուսների համար:

Գ. Ինչքանո՞վ ես դու լավ հասկանում առողջ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո տեսակետը:

6. **Ներկայացրո՛ւ Ա. կետը. «Փոխհարաբերությունների քո անձնական պատմությունը»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 4-րդ:

Քո ուսանողներին ասա՛, որ փոխհարաբերությունների անձնական պատմությանն անդրադառնալիս մենք սկզբում կնայենք ընտանեկան փոխհարաբերություններին, իսկ հետո՝ ընկերական փոխհարաբերություններին: Երրորդ հատվածն արդեն կվերաբերի երևակայական փոխհարաբերություններին:

Քանի որ մենք մտնում ենք խիստ անձնական մի թեմայի մեջ, որը կարող է լցված լինել իրենց անցյալի ցավոտ հիշողություններով, կարևոր է, որ դու՝ որպես ուսուցիչ, անկեղծության և ապահովության մթնոլորտ ստեղծես քո ուսանողների համար: Դրա տարբերակներից մեկը քո անձնական կյանքի փորձառությունից կիսվելով ճանապարհ բացելն է: Մեկ այլ տարբերակ է՝ Թին Չելենջն ավարտած ինչ որ մեկին հարցազրույցի համար ձեր դասարան հրավիրելը, որպեսզի նա կիսվի այս դասի ընթացքում քննարկվելիք առանցքային կետերի շուրջ: Այսպիսի անկեղծ սկիզբը կարող է ուսանողներին օգնել, որպեսզի նրանք էլ անկեղծանան և խոսեն իրենց անցյալի վերաբերյալ:

7. **Անցկացրո՛ւ Ա-1-ա. կետը. «Որքա՞ն անառողջ (դիսֆունկցիոնալ) է եղել քո ընտանիքը»** (2-4 րոպե) Ուսանողի ձեռնարկ, էջ 5-6-րդ:

Այս կետի քննարկումը սկսի՛ր՝ մատնանշելով, որ մեզնից ոչ ոք կատարյալ ընտանիքից չի սերում: Ավելին՝ որոշ ընտանիքներ շատ անառողջ մթնոլորտ ունեն: Դու պետք է սահմանես, թե ինչ է նշանակում անառողջ (դիսֆունկցիոնալ) ընտանիք՝ խնդրելով ուսանողներին, որ իրենք տան իրենց սահմանումն անառողջ ընտանիքի վերաբերյալ: Խնդրի՛ր նրանց, որ պատկերավոր օրինակներ բերեն:

Միայն այն փաստը, որ դու հավատացյալ ընտանիք ես ունեցել, դեռ չի նշանակում, որ այն առողջ է: Եվ միայն այն փաստը, որ քո ընտանիքը հավատացյալ չի եղել, չի նշանակում, որ այն անառողջ է:

Դու կարող ես գրատախտակի վրա թվարկել առողջ ընտանիքի և անառողջ ընտանիքի հատկանիշները: Սա մի՛ դարձրու երկար քննարկման առարկա, այլ օգնի՛ր նրանց, որպեսզի տեսնեն, որ իրենց ընտանեկան անցյալը մեծ ազդեցություն է ունեցել իրենց աճի վրա: Դու կարող ես նրանց առիթ տալ գնահատելու, թե որքանով են նրանց ծնողները լավ եղել փոխհարաբերությունների հարցում. արդյո՞ք նրանք առողջ և լավ փոխհարաբերություններ են ունեցել, թե՞ շատ խնդիրներ են եղել իրենց շրջապատի հետ: Կամ գուցե նրանք միշտ մեկուսացած էին և շատ չեն շփվել մարդկանց հետ:

Եթե քո ուսանողներից ոմանք անառողջ ընտանիքում են մեծացել, հնարավոր է՝ նրանք չեն սովորել, թե ինչպես կարելի է առողջ ընկերություն զարգացնել մարդկանց հետ:

1

8. **Անցկացրո՛ւ Ա-1-բ. կետը. «Բռնությունը մաս կազմե՞լ է քո ընտանիքի պատմության մեջ»** (2-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 6-7-րդ էջեր:

Այս կետը դասարանում անցնելիս շատ զգո՛ւյշ եղիր: Սա քո ուսանողներին կարող է շատ ցավալի հիշողություններ բերել, եթե նրանք մեծացել են մի ընտանիքում, որտեղ բռնություն է տիրել: Մեր նպատակն այստեղ այն չէ, որ նրանք բացահայտ պատմեն, թե ինչպիսի բռնությունների են ենթարկվել մանուկ կամ պատանի հասակում, այլ՝ մատնանշենք, որ ընտանիքում բռնության գոյությունը մեծ վնաս է հասցնում մարդկանց հետ անձնական փոխհարաբերություններ ունենալուն:

Ընդգծի՛ր, որ եթե քո ուսանողները մեծացել են մի ընտանիքում, որտեղ ենթարկվել են ֆիզիկական բռնության, խոսքի բռնության, զգացմունքային բռնության կամ սեռական բռնության, ապա այդ ամենը վնաս է հասցրել նրանց կյանքին: Նրանք կձգտեն իրենց անձնական կյանքում սովորել, թե ինչպես անձնական առողջ փոխհարաբերություններ ունենալ մարդկանց հետ, սակայն նրանց անցյալից եկող այդ վնասը կդժվարացնի այդ գործընթացը:

Մի՛ հապաղիր մատնանշել, որ մենք չենք պատրաստվում մանրամասն քննարկել, թե ինչպիսի բռնության են նրանք անձամբ ենթարկվել, ուղղակի տեղեկացնում ենք, որ կան միջոցներ, որոնք նրանց կօգնեն իրենց կյանքի այս ասպարեզում: Դրանցից մեկը Sallie Culbreth-ի «Committed to Freedom»-ն է:

Մի հանգամանք, որը մենք ուզում ենք այստեղ մատնանշել, այն է, թե որքան խորը կարող է լինել վնասն այն մարդկանցից, ովքեր «ապահով փոխհարաբերություններ» զարգացնելու փոխարեն բռնությամբ են լցված եղել: Դա կործանում է վստահությունը և բացասաբար անդրադառնում քեզ բռնության ենթարկող անձի հետ քո փոխհարաբերությունների վրա: Եվ ոչ միայն դա հեշտությամբ կարող է ազդել ցանկացած մարդու հետ քո փոխհարաբերությունների վրա:

Եթե ավարտածներից մեկը քո հրավերով եկել է քո դասարան, և նա բռնության հետ կապված խնդիր է ունեցել իր անցյալում, դու կարող ես առիթ տալ նրան՝ համառոտ պատմել, թե ինչպես է դա ազդել մարդկանց հետ իր փոխհարաբերությունների վրա:

9. **Անցկացրո՛ւ Ա-1-գ. կետը. «Որո՞նք են փոխհարաբերությունների վերաբերյալ քո ընտանիքի ավանդույթները»** (2-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 7-8-րդ էջեր:

Այս հատվածը քննարկելիս հստակեցրո՛ւ, որ փոխհարաբերությունների վերաբերյալ մեր ընտանեկան ավանդույթները մեծ ազդեցություն են ունենում մեր կյանքի վրա: Մասամբ սա համընկնում է՝ «Որքա՞ն անառողջ (դիսֆունկցիոնալ) է եղել քո ընտանիքը» կետի հետ:

Նշի՛ր, թե որքան հեշտ է արդարացնել փոխհարաբերությունների հարցում մեր սխալները՝ ասելով. «Դե՛հ, մեր ընտանիքում միշտ այդպես է ընդունված եղել»: Ընտանեկան որոշ ավանդույթներ կարող են հրաշալի լինել, իսկ որոշները՝ շատ անառողջ: Մենք կարիք ունենք մեր ընտանեկան ավանդույթները ստուգել Աստծո Խոսքով, որպեսզի կողմնորոշվենք, թե արդյո՞ք պետք է շարունակենք ընդունել դրանք, թե՞ աշխատենք փոխարինել այլ ավանդույթներով: Քաջալերի՛ր նրանց, որ առաջինը լինեն իրենց ընտանիքում, ով նոր, աստվածապաշտ ավանդույթներ կստեղծի և կփոխանցի իր երեխաներին:

10. **Անցկացրո՛ւ Ա-2-ա. կետը. «Քո ընկերները քեզ համար լա՞վ ընկերներ են եղել, թե՞ վատ»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 8-9-րդ:

Փոխհարաբերությունների վերաբերյալ նրանց անձնական պատմությունը այժմ ընտանիքի անդամներից ուղղվում է նրանց ընկերներին: Դու կարող ես ցուցակագրել այն հատկանիշները, որոնցով նրանք կողմնորոշվում են, թե արդյոք տվյալ ընկերն իրենց համար լա՞վն է եղել, թե՞ վատը: Դու կարող ես կրկին հղում անել այս ցուցակին, երբ քննարկելու լինես այս դասի Գ. կետը՝ առողջ ընկերության վերաբերյալ Աստծո տեսակետը:

Թող նրանք կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 1-ին հարցին:

Հարց 1. Մի պահ փորձի՛ր հիշել այն մարդկանց, ովքեր եղել են քո լավագույն ընկերները: Թվարկի՛ր նրանց բնավորության լավագույն հատկությունները, որոնք նրանց այդքան լավ ընկերներ են դարձրել:

Մատնանշի՛ր, որ նրանց պատասխաններն այս հարցին՝ «Քո ընկերները քեզ համար լա՞վն են եղել, թե՞ վատը», կարող են օգնել հասկանալու համար, թե որքա՞ն լավ են նրանք ընկալում՝ ինչ է առողջ ընկերությունը:

1

11. **Անցկացրո՛ւ Ա-2-բ. կետը. «Դու ներգրավված եղե՞լ ես թունավոր փոխհարաբերությունների մեջ»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 9-րդ էջեր:

Դասի այս հատվածի համար նախապատրաստվելիս դու կարող ես նախապես գտնել ինչ-որ մեկին, ով ներգրավված է եղել թունավոր փոխհարաբերությունների մեջ, որպեսզի ուսանողները պատրաստ լինեն կիսվելու իրենց անձնական պատմության այս հատվածի շուրջ: Եթե նա քո դասարանի ուսանողներից մեկն է, ապա կարող ես հարցազրույց անցկացնել նրա հետ այս հարցի վերաբերյալ:

Եթե քո դասարանում այս թեմային համապատասխան ուսանող չկա, ապա կարող ես գտնել մեկ ուրիշի, ով անցյալում թունավոր փոխհարաբերությունների մեջ է եղել: Նրա հետ կարող ես հարցազրույց վարել նաև տեսագրելու միջոցով, որպեսզի նա պատմի, թե ինչ է նշանակում այդպիսի ընկերներ ունենալը: Թող նա նաև պատմի, թե ինչպես է վերջնական արդյունքում խզել այդ փոխհարաբերությունները:

Մի քանի օրինակներ այն մասին, թե ինչ են իրենց մեջ ներառում թունավոր փոխհարաբերությունները.

- Ինչ-որ մեկի կողմից տվյալ անձին ֆիզիկապես կամ բառերով բռնության ենթարկելը:
- Ինչ-որ մեկի կողմից տվյալ անձին մեղքերի, ինչպես նաև կախվածության կամ կյանքը ղեկավարող այլ խնդիրների մեջ ավելի ու ավելի ներքաշելը:
- Ինչ-որ մեկի կողմից ուրիշի կյանքը բացասաբար ղեկավարելու փորձ:
- Ինչ-որ մեկի կողմից տվյալ անձին հանցավոր գործունեության մեջ ներքաշելը:
- Ինչ-որ մեկի կողմից տվյալ անձին Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություններ ունենալուց հեռացնելը:

Թունավոր նյութը մահաբեր է: Թունավոր փոխհարաբերությունները թունավորում են քեզ՝ քո կյանքում կործանելով արժեքներ, որոնք Աստված ուզում է, որ դու ունենաս: Թունավոր փոխհարաբերություններն ավերածություն են բերում քո կյանքում: Նրանք քեզ խորտակում են՝ վեր հանելու փոխարեն:

12. **Անցկացրո՛ւ Ա-2-գ. կետը. «Ի՞նչ խնդիրներ ես դու ունեցել քո ընկերների հետ»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 10-րդ:

Այս կետը քննարկելիս դու կարող ես պարզապես ցուցակագրել այն խնդիրների տեսակները, որոնք քո ուսանողներն ունեցել են իրենց ընկերների հետ փոխհարաբերությունների ընթացքում: Սա լավ առիթ է, որպեսզի նրանք այստեղ անկեղծորեն կիսվեն իրենց կարծիքներով:

Թող քո ուսանողները կիսվեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 2-րդ հարցին տված իրենց պատասխաններով:

Հարց 2. Ի՞նչը կարող է խզել ընկերությունը (խնդիրներ, անհամաձայնություններ և այլն):

Սակայն եթե քո ուսանողները բավականաչափ ազատ չեն, դու կարող ես բերել օրինակներ քո կյանքից, և ցուցակագրել այն խնդիրները, որոնք անցյալի ընկերներն առաջացրել են քո կյանքում: Կամ կարող ես հարցազրույց անցկացնել Թին Չելենջն ավարտած ուսանողներից մեկի հետ:

13. **Անցկացրո՛ւ Ա-3. կետը. «Երևակայական ընկերություն»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 10-րդ:

Քննարկելիս, թե ինչ տեղ ունեն երևակայական փոխհարաբերությունները նրանց կյանքում, ցո՛ւյց տուր նորմալ մանկական խաղերի և չափահաս մարդու վարքի միջև եղած տարբերությունը: Քննարկի՛ր, թե ինչպես կարող են չափահաս մարդու կյանքում երևակայական անառողջ փոխհարաբերությունները տեղ ունենալ: Դրանցից մեկը կիրքն է՝ սեռական հարաբերությունների վերաբերյալ մտքեր ունենալը: Պոռնոգրաֆիկ ֆիլմեր դիտելն անառողջ երևակայության, ոչ իրական փոխհարաբերությունների մեկ ուրիշ օրինակ է:

Քո ուսանողներին պարզաբանի՛ր, որ մտքի մեջ մարդկանց հետ շփումներն իրական փոխհարաբերություններ չեն: Նաև նշի՛ր, որ տեսախաղերը նույնպես մարդկանց մոտ երևակայական փոխհարաբերություններ զարգացնելու տարածված ձևերից են, որոնք գալիս են փոխարինելու իրական փոխհարաբերություններին:

Պատճառներից մեկը, թե ինչու են երևակայական փոխհարաբերություններն ավելի լավը թվում, այն է, որ մենք կատարելապես վերահսկում ենք այդ փոխհարաբերություններին, քանի որ դրանք բոլորը մեր մտքում են տեղի ունենում: Իսկ իրական փոխհարաբերությունները ավելի շատ վտանգ ու անվստահություն են պարունակում իրենց մեջ առ այն, որ քո դիմացինը կարող է մերժել քեզ:

Մատնանշի՛ր, որ երևակայական փոխհարաբերությունները երբեք իրական բավարարվածություն չեն բերի քո կյանքում, որովհետև Աստված քեզ ստեղծել է իրական փոխհարաբերությունների համար:

1

14. Ներկայացրո՛ւ Բ. կետը. «Ինչպիսի՞ ընկեր ես դու մյուսների համար»
(1-2 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 11-րդ էջեր:

Այսօրվա դասաժամի երկրորդ մեծ բաժինը ներկայացնելիս նշի՛ր, որ մենք հիմա քննարկելու ենք ընկերության նրանց կողմը: Այս դասի առաջին բաժինը հիմնականում ուղղված էր այն բանին, թե ինչպես են մյուսները վերաբերվում դրան:

15. Անցկացրո՛ւ Բ-1. կետը. «Դու ապահո՞վ ընկեր ես»
(3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 11-րդ:

Խնդրի՛ր քո ուսանողներին, որ իրենք իրենց դնեն դիմացինի տեղը և հարցնեն.

- Մարդիկ ուզո՞ւմ են լինել իմ ընկերը:
- Ինչպիսի՞ ընկեր եմ ես եղել մյուսների համար:
- Ես բացասակա՞ն ազդեցություն եմ ունեցել նրանց կյանքում, թե՞ դրական:
- Ես վստահելի՞ մարդ եմ:

Նաև խնդրի՛ր քո ուսանողներին, որ քննարկեն, թե ինչպիսին են նրանց տեսնում մարդիկ: Մենք ընդամենը փորձում ենք այնպես անել, որ նրանք անկեղծ հայացք գցեն իրենք իրենց վրա և սկսեն հասկանալ, թե ինչպիսի՞ ընկեր են մյուսների համար:

16. Անցկացրո՛ւ Բ-2. կետը. «Դու փոխհարաբերություններով «բռնվա՞ծ» ես»
(3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 11-12-րդ:

Դասի այս բաժնի համար նախապատրաստվելիս դու կարող ես հարցազրույց վարել այնպիսի մեկի հետ, ով «զգացմունքային կախվածություն» է ունեցել, այսինքն՝ օգտագործել է մարդկանց, իսկ երբ օգտվելու բան չի մնացել, ազատվել է նրանցից: Դու կարող ես այս հարցը տալ անցյալ ժամանակով. «Դու նախկինում զգացմունքային կախվածություն ունեցե՞լ ես»: Եթե դասարանում կամավորներ գտնվեն, խնդրի՛ր նրանց՝ բացատրել, թե ինչ է դա, և որոնք են դրա հետևանքները:

17. **Անցկացրո՛ւ Բ-3. կետը. «Դու սխալին աջակցո՞ղ ես»** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 12-րդ էջեր:

Այս կետի քննարկումն սկսելիս անպայման սահմանի՛ր, թե ինչ է նշանակում «սխալին աջակցող»: Դա այն է, երբ դու սխալ օգնություն ես առաջարկում քո ընկերոջը կամ սիրելի մարդուն: Սխալին աջակցողը օգնում է խնդրի հասունանալուն իր ընկերոջ կյանքում: Նա ծածկոց է հանդիսանում իր ընկերոջ համար և արդարացնում է նրա արածները: Սխալին աջակցողը չի կարող դիմակայել իր ընկերների հետ փոխհարաբերությունների մեջ առկա խնդիրներին: Նա իրեն տվյալ պահին լավ է զգում, երբ ինչ-որ մեկին հանում է դժվարին դրությունից: Սխալին աջակցողը հաճախ իրեն է մեղադրում իր սիրելիների կամ ընկերների կյանքում եղած խնդիրների համար:

Այս թեման ավելի մանրամասն քննարկվում է Դեյվիդ Բեթթիի՝ «Present Day Miracles at Teen Challenge»-ում: Այս գրքում սխալին աջակցելու վերաբերյալ մի գլուխ կա: Գիրքը կարելի է նաև ներբեռնել www.iTeenChallenge.org կայքից: Գնա՛ Ministry Tools բաժինը, և օգտագործելով որոնման տողը՝ գտի՛ր «Enabling» բաժինը:

Ուսանողների հետ քննարկի՛ր, թե ինչ ձևով են նրանք իրենց կյանքում օժանդակել ուրիշների սխալներին: Օգնի՛ր նրանց, որ տեսնեն, թե ինչպես են այդպիսի սխալ օգնությունները վերջնական արդյունքում կործանում առողջ փոխհարաբերությունները և դրանք դարձնում անառողջ:

18. **Ներկայացրո՛ւ Գ. կետը. «Ինչքանո՞վ ես դու լավ հասկանում առողջ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո տեսակետը»** (1-2 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 13-րդ:

Դասի այս երրորդ բաժինը սկսի՛ր՝ արագ ամփոփելով, թե ինչպես է այս թեման կառուցվում սույն դասի նախորդ երկու թեմաների վրա: Մենք սկսեցինք՝ դիտարկելով մարդկանց, ընտանիքի, ընկերների հետ մեր անձնական փոխհարաբերությունների պատմությունը: Այնուհետև մենք քննեցինք, թե ինչպիսի ընկեր ենք մենք եղել մյուսների համար:

Այժմ մենք ուզում ենք անդրադառնալ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո տեսակետին: Ուսանողի ձեռնարկի (13-17-րդ էջեր) համապատասխան գլխի այս հատվածում սույն թեմայի վերաբերյալ 6 կետ կա: Անհրաժեշտ է, որ դու կողմնորոշվես, թե դրանցից որոնց վրա ես կենտրոնանալու, իսկ որոնք ես արագ անցնելու, երբ հասնես այս դասաժամի գործնական կիրառմանը:

Հստակեցրու փաստը, որ Աստվածաշունչը շատ բան ունի ասելու մյուսների հետ անձնական փոխհարաբերությունների մասին, և մենք ճիշտ կանեինք, եթե լսեինք, թե ինչ է Աստված ասում մեր կյանքի այս ասպարեզը բարելավելու մասին:

1

19. **Անցկացրո՛ւ Գ-1. կետը. «Քո կյանքում Աստծո առաջնահերթությունը փոխհարաբերությունների վերաբերյալ»**
(2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 13-րդ:

Այս կետի քննարկումը սկսելիս թող ուսանողները նայեն Աստվածաշնչի երկու մեծագույն պատվիրանները, որոնք երկուսն էլ վերաբերում են փոխհարաբերություններին: Տե՛ս Մարկոս 12.28-31-ը: Ընդգծի՛ր, որ Աստված մարդկանց հետ փոխհարաբերությունների հարցում կատարյալ մասնագետ է, և մենք կարող ենք Նրանից սովորել, թե ինչպես բարելավել մարդկանց հետ մեր փոխհարաբերությունները:

Առողջ փոխհարաբերություններն Աստծո ծրագրի մի մասն են քո կյանքի համար, ինչպես նաև՝ լիառատ կյանք ապրելու առանցքը, ինչպես Նա է սահմանել՝ իրական կյանքը:

20. **Անցկացրո՛ւ Գ-2. կետը. «Քո վաղ շրջանի դասերի առումով՝ փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո ծրագիրը»**
(2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 14-րդ:

Այս կետը քո ուսանողներից ոմանց կտանի անձնական ցավի մի վայր, որտեղ նրանք կառերեսվեն իրականության հետ, որ իրենց ծնողները չեն արել այն, ինչ Աստված ծրագրել էր նրանց համար: Շատ ծնողներ չեն բավարարում ծնողների վերաբերյալ Աստծո ակնկալիքները:

Աստծո մտադրությունն է, որ երեխաները փոքրուց իրենց ծնողներից սովորեն մարդկանց հետ առողջ փոխհարաբերություններ զարգացնել: Սակայն քո ուսանողներից շատերը, հնարավոր է, մեծացել են անառողջ ընտանիքներում: Այս բաժնում դու կարող ես քո ուսանողներին ուղղորդել հետ՝ դեպի անառողջ ձևերի այն ցուցակը, որը բնորոշում է անառողջ ընտանիքներին:

Մեր նպատակը փոխհարաբերությունների հետ կապված՝ նրանց բոլոր խնդիրների համար իրենց ընտանիքներին մեղադրելը չէ: Ուղղակի պետք է ասել, որ մեզնից շատերը մարդկանց հետ անառողջ փոխհարաբերությունների այս ուղու վրա հայտնվել են այն պատճառով, որ մեր ծնողները մեզ չեն սովորեցրել փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո տեսակետը:

21. **Անցկացրո՛ւ Գ-3. կետը. «Աշխարհի տեսակետը համեմատած Աստծո տեսակետի հետ»** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 14-15-րդ:

Սա կարող է լինել Գ. կետի մի մասը, որի վրա կարող ես ավելի շատ ժամանակ անցկացնել, քան մյուս կետերի: Օգնի՛ր քո ուսանողներին՝ հասկանալ, որ փոխհարաբերությունների վերաբերյալ աշխարհիկ տեսակետի և Աստծո տեսակետի տարբերությունը գիտակցելը շատ կարևոր է աճելու հարցում:

Համառոտ քննարկի՛ր, թե ինչպես են փոխհարաբերության վերաբերյալ նրանց տեսակետներն ազդեցություն կրել իրենց ընկերներից, իրենց մշակույթից՝ հեռուստատեսությունից, ֆիլմերից և այլն:

Դու կարող ես քո ուսանողներին խնդրել, որպեսզի լրացնեն իրենց՝ Ուսանողի ձեռնարկի 15-րդ էջում զետեղված դատարկ աղյուսակները, որտեղ նրանք պետք է զանազանեն փոխհարաբերությունների վերաբերյալ աշխարհիկ տեսակետի և Աստծո տեսակետի միջև եղած տարբերությունը: Փոխհարաբերության վերաբերյալ այդ վեց բնութագրիչները սպառիչ չեն, շատ ուրիշ բնութագրիչներ էլ կան, որոնք դու և քո ուսանողները կարող եք գտնել:

Հորդորի՛ր քո ուսանողներին, որպեսզի համարներ գտնեն Աստվածաշնչում, որոնք համապատասխանում են փոխհարաբերության յուրաքանչյուր բնութագրիչին:

22. **Անցկացրո՛ւ Գ-4. կետը. «Առակաց գրքի իմաստությունը քեզ համար»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 15-16-րդ:

Հնարավոր է՝ դու ժամանակ չունենաս այս կետը մանրամասնորեն քննարկելու, սակայն թող նրանք Առակաց գրքի մեջ գտնեն մի քանի համարներ, որոնք վերաբերում են փոխհարաբերություններին:
Այս գիրքը լի է անառողջ փոխհարաբերությունների վերաբերյալ զգուշացումներով, ինչպես նաև առողջ փոխհարաբերություններ կառուցելու վերաբերյալ բազմաթիվ լավ խորհուրդներով: Քո ուսանողներին քաջալերիր կարդալ այդ գիրքը, ուսումնասիրելով փոխհարաբերությունների մասին յուրաքանչյուր խոսք:

Քաջալերի՛ր նրանց, որ Առակաց գրքում ոչ միայն գտնեն այդ համարները, այլ նաև դրանք գործածեն իրենց կյանքում:

1

23. **Անցկացրո՛ւ Գ-5. կետը. «Սովորի՛ր Աստվածաշնչի մարդկանց օրինակներից»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 16-17-րդ էջեր:

Մի ամբողջ դասաժամ հեշտությամբ կարելի էր նվիրել այս կետին: Դու ստիպված պետք է որոշես, թե որքան ժամանակ հատկացնես այս կետին: Աստվածաշնչի մարդկանց օրինակները հզոր դասեր են, որոնք մենք պետք է կիրառենք մեր կյանքում՝ մարդկանց հետ մեր փոխհարաբերություններում:

Վերցրո՛ւ օրինակներ Ուսանողի ձեռնարկից կամ այլ աղբյուրներից, որոնք քո կարծիքով լավագույնս համապատասխանում են քո ուսանողների ներկայացրած իրավիճակներին, որպեսզի նրանք կարևոր դասեր առնեն մարդկանց հետ ունեցած իրենց փոխհարաբերությունների վերաբերյալ:

Դու կարող ես խնդրել ուսանողներից մեկին՝ նախապես ընտրել և դասարանին ներկայացնել Աստվածաշնչի այդ օրինակներից, որպեսզի պարզեն, թե փոխհարաբերությունների վերաբերյալ ինչ կարելի է սովորել Աստվածաշնչի տվյալ օրինակն ուսումնասիրելով:

24. **Անցկացրո՛ւ Գ-6. կետը. «Ինչպե՞ս էր Հիսուսը վերաբերվում մարդկանց հետ»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 17-րդ:

Հիսուսը փոխհարաբերությունների առումով լավագույն ուսուցիչն է Աստվածաշնչում: Այս հատվածին նույնպես կարելի էր մի ողջ դասաժամ հատկացնել: Հիսուսի կյանքից ընտրի՛ր երկու կամ երեք օրինակ, որոնք փոխհարաբերությունների վերաբերյալ ներկայացնում են կարևոր դասեր: Դասեր, որոնք քո ուսանողները կարիք ունեն իրենց կյանքում կիրառելու:

25. **Անձնական կիրառություն** (5-10 րոպե):

Մի քանի մտքեր կան, որոնք կարող էին օգտագործվել այսօրվա դասի անձնական կիրառության մեջ: Դու պետք է կողմնորոշվես, թե որն է քո ուսանողների համար այսօրվա՝ փոխհարաբերությունների վերաբերյալ դասի մեջ ամենակարևորը:

Ա. Թող քո ուսանողներն ինքնուրույն գտնեն փոխհարաբերությունների վերաբերյալ աշխարհիկ տեսակետի և Աստծո տեսակետի միջև եղած տարբերությունները, որոնք քննարկված են Ուսանողի ձեռնարկի 15-րդ էջում: Նրանք կարող են այս հանձնարարությունը կատարել՝ հիմնվելով իրենց անձնական փորձառության վրա: Թող նրանք գտնեն աստվածաշնչյան համարներ, որոնք ցույց են տալիս Աստծո տեսակետը փոխհարաբերությունների վերաբերյալ: Նաև անհրաժեշտ է, որ նրանք միասին աշխատեն այս նախագծի վրա:

Բ. Թող քո ուսանողներն Առակաց-ից գտնեն տասը համարներ, որոնք խոսում են մարդկանց հետ անձնական փոխհարաբերություններ ունենալու մասին, և գրեն իրենց կարծիքը, թե ինչպես կարող են այդ համարները կիրառել կյանքում:

Գ. Թող նրանք ուսումնասիրեն Հիսուսի կյանքը և գտնեն մարդկանց հետ փոխհարաբերությունների վեց օրինակներ, և թե ինչ դասեր նրանք կարող են կիրառել իրենց կյանքում այսօր:

26. Հանձնարարություններ:

Ա. Եթե դեռ չես արել, բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկներն այս դասընթացի համար: Թող ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամին պատրաստվելու համար: Հորդորի՛ր նրանց, որ նորից կարդան 1-ին գլուխը՝ այսօրվա դասաժամին քննարկված թեմաները վերանայելու համար:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցչի ձեռնարկ, Նախագիծ 1-ինի՝ «Ընկերներ» բաժնի համար:

Գ. Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի նայեն Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 2-րդը՝ «Ընկերության տարբեր տեսակներ», և սկսեն աշխատել դրա վրա Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը կարդալուց հետո: Բացատրի՛ր, որ մենք այս նախագծի վրա աշխատելու ենք հաջորդ դասաժամին:

27. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 2.
Ընկերության չորս տեսակներ

2

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ապահով փոխհարաբերություններ կառուցելու առաջին քայլը գործնական ձևեր զարգացնելն է՝ որպես ընկեր իմ պատասխանատվությունները կատարելու համար:

2. **Բանալի համար. Ա Կորնթացիներին 13.7.**

«Ամեն բան կրում է, ամեն բանի հավատում է, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Մենք այսօրվա դասին նաև կօգտագործենք Ուսուցման ուղեցույցի հետևյալ երկու նախագծերը.

Նախագիծ 1. «Ընկերներ»:

Նախագիծ 2. «Ընկերության տարբեր տեսակներ»:

4. **Ուսուցչի նախապատրաստությունն այս դասի համար**

Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլխի նյութն ընկերությունը ներկայացնում է այն ձևով, որ գուցե անծանոթ լինի քո ուսանողների համար: Դու պետք է պատրաստ լինես դրա յուրաքանչյուր մակարդակի համար համապատասխան օրինակներ բերելու: Քո անձնական կյանքից օրինակներ բերելը կարող է ուսուցման շատ գործնական ձև լինել այսօրվա դասի համար:

Մեկ այլ հնարավորություն է՝ հարցազրույցի համար դասարան հյուր կանչելը: Հյուր կանչելիս համոզվի՛ր, որ նա ծանոթ է Ուսանողի ձեռնարկի 2-րդ գլխի նյութին և պատրաստ է օրինակներ բերել ընկերության չորս տեսակներից յուրաքանչյուրի համար:

Դու նաև պետք է պատրաստ լինես բացատրելու, որ Ընկերության 4-րդ տեսակը՝ մտերիմ ընկերությունը, սեռական փոխհարաբերությունների մասին չէ: Քո ուսանողներից շատերը, հնարավոր է, կարիք ունենան բավականին շատ բաներ սովորելու ընկերության մեջ իրական մտերմության մասին:

Այսօրվա դասաժամի նյութը հիմնված է «Institute in Basic Life Principles»-ում ուսուցանված սկզբունքների վրա: Սեմինարի ժամանակ օգտագործված աշխատանքային տետրը լրացուցիչ տեղեկություն է պարունակում այդ ընկերության յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ: Հնարավորության դեպքում դու կարող ես այդ նյութերից օգտագործել այսօրվա դասաժամի համար:

5. **Դասի ջերմացում** (2-3 րոպե):

Այսօրվա դասաժամն սկսի՛ր՝ խնդրելով քո ուսանողներին, որպեսզի վերհիշեն, թե ովքեր են եղել իրենց լավագույն ընկերները, և ինչն է նրանց այդքան լավը դարձրել: Թող նրանք նայեն իրենց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 1-ին հարցին: Թեև դու այս նախագիծն արդեն օգտագործել ես նախորդ դասին, սակայն այն պատշաճ ձևով կապակցվում է նաև այս դասի հետ:

Դու նրանց կարող ես տալ հետևյալ հարցը. «Ինչո՞ւ քեզ ծանոթ բոլոր մարդիկ քո «լավագույն ընկերները» չեն»: Սա նրանց պետք է մղի այսօրվա դասի կարևոր հանգամանքներից մեկի մասին մտածելուն, այն է՝ մեր ճանաչած բոլոր մարդիկ չէ, որ կարող են մեր լավագույն ընկերը դառնալ:

6. **Ներկայացրո՛ւ այսօրվա դասը** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 18-րդ:

Այսօրվա դասը սկսելիս մատնանշի՛ր, որ մենք անդրադառնալու ենք ընկերության չորս տեսակների կամ չորս մակարդակների: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի վերցնեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդը՝ «Ընկերության տարբեր տեսակներ», և օգտվեն դրանից այսօրվա ողջ դասի ընթացքում: Այս նախագծի առաջին հանձնարարությունն այն է, որ նրանք պետք է գրեն այն մարդկանց անունները, որոնք համընկնում են այդ ընկերության կոնկրետ տեսակի հետ: Քաջալերի՛ր նրանց, որ այդ անունները գրեն այսօրվա դասն անցնելու ընթացքում:

Դու կարող ես նաև մատնանշել, որ որոշ մարդիկ չունեն մոտիկ կամ մտերիմ ընկերներ: Այնպե՛ս արա, որ քո ուսանողներն իրենց հարկադրված չզգան՝ լրացնելու բոլոր բաց տեղերն Ուսուցման ուղեցույցի 2-րդ նախագծի մեջ:

2

7. **Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ծանոթներ»**
(4-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 18-20-րդ էջեր:

Ընկերության այս մակարդակը քննարկելիս մատնանշի՛ր, որ մենք յուրաքանչյուր մակարդակ ուսումնասիրելիս օգտագործելու ենք երեք ասպարեզներ, այն է՝

1. **Նկարագրություն,**
2. **Քո ազատությունները**
3. **Քո պատասխանատվությունները:**

Քո ուսանողներից մեծ մասի համար կարող են տարօրինակ թվալ ընկերությունը սահմանելու վերջին երկու կետերը՝ Քո ազատությունները և Քո պատասխանատվությունները օգտագործելը: Սակայն հստակեցրո՛ւ, որ ընկերության այս չորս մակարդակները դիտարկելիս մենք ուզում ենք, որ նրանք մեկը մյուսին նայեն Աստծո աչքերով. ի՞նչ է Աստված ակնկալում մեզնից ընկերության յուրաքանչյուր տեսակի հարցում:

Անպայման մի քանի օրինակնե՛ր բեր ծանոթությունների վերաբերյալ:

Ուսանողի ձեռնարկի 19-րդ էջում գրված է, որ յուրաքանչյուր ծանոթություն պետք է դիտել որպես «աստվածային հանդիպում»: Համոզվելու համար, որ քո ուսանողները հասկանում են, թե ինչ է դա նշանակում, մի քանի կոնկրետ օրինակնե՛ր բեր:

Ուսանողի ձեռնարկի 19-րդ էջում նշված են նաև մի քանի կետեր, որոնք նրանք կարող են օգտագործել իրենց ծանոթների հետ փոխհարաբերություններում: Նշի՛ր, որ նրանց ծանոթներից շատերը, հնարավոր է, հավատացյալներ չլինեն:

Մի բան, որ այստեղ կարող ես քո ուսանողներին հուշել, այն է, որ մեր ծանոթների բազմությունը դառնում է մի հնարավորություն, որտեղից մենք կարողանում ենք մարդկանց ընտրել ընկերության հաջորդ մակարդակների համար՝ սովորական ընկերներ, մոտիկ ընկերներ և մտերիմ ընկերներ: Մենք պետք է ջանասիրաբար փորձենք ծանոթանալ նրանց հետ, ովքեր պոտենցիա ունեն՝ հետագայում դառնալու մեր մոտիկ ընկերները:

Քո ուսանողները պետք է եռանդագին աշխատեն ծանոթանալ իրենց եկեղեցու մյուս հավատացյալների հետ, մարդկանց, ովքեր իրենցից ավելի հասուն են և կարող են իրենց համար այնպիսի ընկերներ լինել, որոնք կօգնեն ավելի մոտենալու Աստծուն:

Հետևողականորեն քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի ընկերություն սկսելու հարցում պասիվ չլինեն: - Մի՛ սպասիր՝ մինչև մյուսները փորձեն ընկերանալ քեզ հետ: Ջանասիրաբար փորձի՛ր նոր ծանոթություններ ձեռք բերել՝ խնդրելով Աստծուն, որպեսզի ուղղորդի քեզ այս

փոխհարաբերությունների մեջ: Մի՛ աշխատիր լինել վերցնող, այլ աշխատի՛ր լինել տվող: Գտի՛ր մարդկանց, ովքեր ընկերոջ կարիք ունեն և փորձի՛ր ընկերանալ նրանց հետ: Մի՛ աշխատիր ընկերանալ նրանց հետ, ովքեր ճանաչված են իրենց շրջապատում:

8. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Պատահական ընկերներ»
(4-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 20-21-րդ էջեր:

Օգտագործի՛ր այն նույն երեք կետերը՝ նկարագրություն, քո ազատությունները, քո պատասխանատվությունները, որոնք օգտագործեցիր ծանոթներին նկարագրելու համար, որպեսզի նկարագրես նաև սովորական ընկերներին: Օգնի՛ր նրանց՝ տեսնել ծանոթների ու սովորական ընկերների միջև եղած տարբերությունը:

Կոնկրետ օրինակնե՛ր բեր սովորական ընկերների վերաբերյալ: Մատնանշի՛ր, որ մենք ենք որոշում, թե ովքեր կարող են լինել մեր սովորական ընկերները: Նրանք պետք է շատ ուշադիր լինեն, երբ ավելի բարձր չափանիշներ են սահմանում սովորական ընկերների համար՝ համեմատած ծանոթների: Այս նույն սկզբունքը կկիրառվի նաև հաջորդ երկու մակարդակների համար:

Բացատրի՛ր քո ուսանողներին, որ մեր հաջորդ դասաժամին մենք ավելի շատ կխոսենք ապահով ընկերներ ընտրելու մասին: Սակայն նախազգուշացրո՛ւ նրանց, որ սա կարևոր թեմա է, որի վրա նրանք պետք է խորհեն, երբ նույնիսկ սովորական ընկերներ են ուզում ընտրել. արդյո՞ք տվյալ մարդը ապահով ընկեր է:

Համեմատության մեջ դի՛ր ընկերության այս մակարդակի պատասխանատվությունները ծանոթների հանդեպ պատասխանատվությունների հետ: Օգնի՛ր նրանց՝ տեսնել, որ այն պատասխանատվությունները, որոնք վերաբերում են ծանոթներին, վերաբերում են նաև սովորական ընկերներին: Դեռ ավելին. նրանք սովորական ընկերների հանդեպ ավելի մեծ պատասխանատվութուններ ունեն, քան ծանոթների:

Եթե դու հյուր ես հրավիրել դասարան, որպեսզի խոսեք ընկերության մասին, թող նա կիսվի իր փորձառությունից, որը ձեռք է բերել տարբեր տեսակի ընկերների հետ շփվելու ընթացքում:

Լավ կլինի նաև քաջալերել քո ուսանողներին, որ սովորական ընկերներ ընտրեն տարբեր տարիքի մարդկանցից, ոչ թե միայն իրենց հասակակիցներից:

2

9. **Անցկացրո՛ւ Գ. կետը. «Մտերիմ ընկերներ»**
(4-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 21-22--րդ էջեր:

Մոտիկ ընկերներին նկարագրելու համար օգտագործի՛ր նույն ձևաչափը, որն օգտագործել էիր նախորդ երկու մակարդակները նկարագրելու համար, այն է՝ նկարագրություն, քո պատասխանատվությունները, քո ազատությունները: Օգնի՛ր նրանց՝ տեսնել ծանոթների, սովորական ընկերների և մոտիկ ընկերների միջև եղած տարբերությունը:

Կոնկրետ օրինակնե՛ր բեր մոտիկ ընկերների վերաբերյալ: Նշի՛ր, որ մենք ենք ընտրում, թե ովքեր են լինելու մեր մոտիկ ընկերները: Նրանք պետք է շատ ուշադիր լինեն, երբ ավելի բարձր չափանիշներ են սահմանում մոտիկ ընկերների համար՝ համեմատած սովորական ընկերների ու ծանոթների: Ընդգծի՛ր, որ ինչքան բարձր է ընկերության մակարդակը, այնքան բարձր պետք է լինեն այն չափանիշները, թե ովքեր կարող են լինել նրանց ընկերներն այդ մակարդակում:

Համեմատի՛ր այս մակարդակի ընկերության հանդեպ նրանց պատասխանատվությունները սովորական ընկերների և ծանոթների հանդեպ պատասխանատվությունների հետ: Օգնի՛ր նրանց տեսնել, որ նույն պատասխանատվությունները, որոնք վերաբերում էին սովորական ընկերներին ու ծանոթներին, վերաբերում են նաև մոտիկ ընկերներին: Դեռ ավելին. նրանք մոտիկ ընկերների հանդեպ ավելի մեծ պատասխանատվություն ունեն, քան սովորական ընկերների և ծանոթների հանդեպ:

Թող քո ուսանողները մի պահ նայեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի 1-ին կետին, և խորհեն, թե ում կարող են գրել իրենց մոտիկ ընկերների ցուցակում. լինի ներկա, թե անցյալ ընկերներից: Մատնանշի՛ր, որ հնարավոր է՝ ինչ-որ մեկը մոտիկ ընկերներ ընդհանրապես չունենա: Նաև հիշեցրո՛ւ, որ նրանք պարտավոր չեն մոտիկ ընկերոջ ցուցակում լրացնել բոլոր բաց թողած տեղերը:

Քո ուսանողներին քաջալերի՛ր, որպեսզի շատ ուշադիր լինեն՝ այս մակարդակում նոր ընկերներ ընտրելիս: Մատնանշի՛ր, որ նրանք կարիք ունեն լինելու ճշմարիտ քրիստոնյաներ, ովքեր ջանասիրաբար աշխատում են ավելի մոտենալ Աստծուն: Մի մոտիկ ընկեր, ով իր կյանքը չի նվիրել Քրիստոսին, կարող է շատ բացասական ազդեցություն ունենալ նրանց կյանքում:

Ահա մի քանի սկզբունքային կետեր, որոնք դու կարող ես քննարկել այս հատվածում:

1. Քո ուսանողներին հորդորի՛ր զգույշ լինել, երբ խոսքը վերաբերում է հաջորդ մակարդակի ընկերություններին, հատկապես՝ մոտիկ ընկերոջ և մտերիմ ընկերոջ մակարդակներում: Չի կարելի ցատկել մոտիկ ընկերության մակարդակին մեկ օրում: Նրանք պետք է ժամանակ տան, որպեսզի տվյալ ընկերությունը հասունանա: Մի ընկերություն, որը մեկ օրում ցատկելով հասնում է մոտիկ ընկերության մակարդակի, կարող է շատ շուտ քանդվել, որովհետև ամուր հիմքի վրա կառուցված չէ:

2. Քո կյանքից օրինակնե՛ր բեր՝ ցույց տալու, որ մոտիկ ընկերներ ձեռք բերելը պետք է դանդաղ տեղի ունենա: Նրանք պետք է նախապես իմանան Հիսուսի հանդեպ տվյալ անձնավորության վերաբերմունքը, հետո նոր միայն որոշեն նրա հետ մտերիմ ընկերներ լինելու հարցը:

3. Նրանք պետք է աշխատեն մի քանի մոտիկ ընկերներ ունենալ, ոչ թե՝ ընդամենը մեկ: Սա նշանակում է, որ քո մոտիկ ընկերները պետք է իմանան, որ դու ուրիշ մոտիկ ընկերներ էլ ունես: Մի տարածված խնդիր, որ որոշ մարդիկ ունեն, այն է, որ նրանք խանդում են, երբ իմանում են, որ իրենց մոտիկ ընկերը նաև մեկ այլ անձնավորության մոտիկ ընկերն է: Այս խանդը ցույց է տալիս տվյալ անձնավորության ոչ հասուն լինելը:

4. Մեկ այլ իրականություն, որ երբեմն հանդիպում է, այն է, որ այն անձնավորությունը, ում հետ դու ուզում ես մոտիկ ընկեր լինել, հետաքրքրված չէ քեզ հետ այդ մակարդակի ընկերություն անելու համար: Գուցե նա հետաքրքված է քեզ հետ ընդամենը սովորական ընկեր, կամ ընդամենը ծանոթ լինելու նկատառումով: Մենք կարիք ունենք Աստծուն նայելու, որպեսզի մեզ առաջնորդի մեր մոտիկ ընկերներին ընտրելիս, և կարիք ունենք աղոթելու, որպեսզի Աստված լավ ընկերներ բերի մեր կյանքում:

5. Որոշ մարդիկ, հնարավոր է, ցանկանան քեզ հետ մոտիկ ընկեր լինել, սակայն չհամապատասխանեն քո դրած չափանիշներին (կամ Աստծո չափանիշներին): Դու պետք է զգույշ լինես և չցատկես ինչ-որ մեկի հետ մոտիկ ընկերություն անելու համար միայն այն պատճառով, որ նրանք ուզում են քո ընկերը լինել: Բոլորը չէ, որ ապահով անձնավորություն են, և դու պետք է շատ զգույշ լինես և թույլ չտաս, որ քո զգացմունքներն ընտրեն քո ընկերներին: Աղոթքո՛վ խորհիր մոտիկ ընկեր ընտրելու քո յուրաքանչյուր որոշման հարցում:

2

10. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Մտերիմ ընկերներ»
(4-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 22-24-րդ էջեր:

Մարտահրավերներից մեկը, որ դու հնարավոր է՝ ունենաս մտերիմ ընկերների (կամ ընկերուհիների) մասին խոսելիս, կարող է լինել այն, որ քո ուսանողներին կթվա, թե դու խոսում ես ինչ-որ մեկի հետ սեռական մտերմության մասին: Այս դասաժամի հենց սկզբում հստակեցրո՛ւ, որ իրական մտերմությունն ուղղակի կապ չունի սեռական փոխհարաբերությունների հետ:

Մտերիմ ընկերությունը նկարագրելու համար օգտագործի՛ր այն նույն ձևաչափը, որն օգտագործեցիր ընկերության նախորդ երեք մակարդակները նկարագրելիս, այն է՝ նկարագրություն, քո ազատությունները, քո պատասխանատվությունները: Օգնի՛ր նրանց՝ տեսնել մտերիմ ընկերների և ընկերության մյուս երեք մակարդակների միջև եղած տարբերությունը:

Կոնկրետ օրինակնե՛ր բեր մտերիմ ընկերության վերաբերյալ: Նշի՛ր, որ մենք ենք որոշում, թե ովքեր կարող են լինել մեր մտերիմ ընկերները: Նրանք պետք է շատ ուշադիր լինեն, երբ ավելի բարձր չափանիշներ են սահմանում մտերիմ ընկերների համար՝ համեմատած ընկերության մյուս երեք մակարդակների: Ընդգծի՛ր, որ ինչքան բարձր է ընկերության մակարդակը, այնքան բարձր պետք է լինեն չափանիշները, թե ովքեր կարող են լինել նրանց ընկերներն այդ մակարդակում:

Համեմատության մե՛ջ դիր այս մակարդակի ընկերության հանդեպ նրանց պատասխանատվությունները ընկերության մյուս երեք մակարդակների պատասխանատվությունների հետ: Օգնի՛ր նրանց՝ տեսնել, որ նույն պատասխանատվությունները, որոնք վերաբերում էին ընկերության մյուս երեք մակարդակներին, վերաբերում են նաև մտերիմ ընկերներին, և ավելին: Նրանք մտերիմ ընկերների հանդեպ ավելի մեծ պատասխանատվություն ունեն, քան ընկերության մյուս երեք մակարդակների՝ ծանոթների, սովորական ընկերների, մոտիկ ընկերների հանդեպ:

Թող քո ուսանողները մի պահ նայեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի 1-ին կետը, և խորհեն, թե ում կարող են գրել իրենց մտերիմ ընկերների ցուցակում. լինի ներկա, թե անցյալ ընկերներից: Մատնանշի՛ր, որ հնարավոր է՝ ինչ-որ մեկը մտերիմ ընկերներ ընդհանրապես չունենա: Նաև հիշեցրո՛ւ, որ նրանք պարտավոր չեն մտերիմ ընկերոջ ցուցակում լրացնել բոլոր բաց թողած տեղերը:

Քո ուսանողներին հորդորի՛ր, որ շատ ուշադիր լինեն այս մակարդակում նոր ընկերներ ընտրելիս: Մատնանշի՛ր, որ նրանք ճշմարիտ քրիստոնյաներ լինելու կարիք ունեն, ովքեր ջանասիրաբար աշխատում են ավելի մոտենալ Աստծուն: Ցանկացած մտերիմ ընկեր, ով իր կյանքը չի նվիրել Քրիստոսին, կարող է շատ բացասական ազդեցություն ունենալ նրանց կյանքում:

Օգնի՛ր նրանց՝ տեսնել, որ լավագույն մտերիմ ընկերը, որ նրանք կարող են ունենալ, Աստված Ի՛նքն է: Մի պահ ժամանա՛կ հատկացրու քննարկելու համար, թե ինչ է ասում Պողոսը Բ Կորնթացիներին 13.14-ում՝ անձնական փոխհարաբերությունների վերաբերյալ, որն Աստված ուզում է, որ մենք մեկս մյուսի հանդեպ ունենանք:

Բ Կորնթացիներին 13:14.

«Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ բոլորիդ հետ լինի: Ամեն»:

Շատ կան մարդիկ, որոնք երբևէ չեն ունեցել մտերիմ ընկերներ: Հնարավոր է՝ քո ուսանողներից ոմանք ներկայումս ոչ մի մտերիմ ընկեր չունենան: Մի՛ խնդրիր, որ ձեռք բարձրացնեն այս հարցով, սակայն եթե լինեն կամավորներ, թո՛ւյլ տուր նրանց, որ կիսվեն, թե ինչ են զգում այդ առումով:

Ասա՛ քո ուսանողներին, որ ավելի լավ է սպասել, մինչև Աստված ճիշտ մտերիմ ընկեր կբերի նրանց կյանքում: Պետք չէ շտապել ինչ-որ մեկի հետ մտերմություն անել, ով այս մակարդակի ընկերության համար չի համապատասխանում Աստծո չափանիշներին:

Ինչպես ասացինք մոտիկ ընկերների հետ կապված, այնպես էլ այստեղ զգուշացրո՛ւ նրանց, որպեսզի չշտապեն պատահական մեկի հետ մտերիմ ընկերություն սկսել: Ընդհակառակը, թող նրանք ընկերություն կառուցելու համար ժամանակ հատկացնեն այնպիսի անձնավորության հետ, ով ապահով ընկեր է: Մենք սրա մասին ավելի մանրամասն կխոսենք հաջորդ դասաժամին:

Մոտիկ ընկերության վերաբերյալ վերը նշված հինգ թեմաները կիրառելի են նաև մտերիմ ընկերության դեպքում: Դու կարող ես քննարկել այս թեմաներից որոշ մասը և կապել դրանք մտերիմ ընկերության հետ:

11. **Ըստ ցանկության. Վստահության դերն ընկերություն կառուցելու մեջ** (3-5 րոպե), Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ին, հարց 4-րդ:

Եթե ժամանակ ունես, կարող ես քննարկել Ուսուցման ուղեցույցի 4-րդ հարցում բարձրացված հարցը:

Հարց 4. Ի՞նչ կապ ունի վստահությունն ընկերություն կառուցելու հարցում:

Եթե ժամանակ չունես այս հարցն այսօրվա դասաժամին քննարկելու համար, դու կարող ես այն ներառել հաջորդ դասաժամի մեջ:

Թող քո ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որոնք տվել են Ուսուցման ուղեցույցի այս հարցին: Այդ պատասխանները քեզ կարող են նոր պատկերացում տալ, թե որքանով են նրանք լավ հասկացել այս թեման Աստծո տեսակետից, կամ էլ գուցե նրանք լրացուցիչ ուսուցման կարիք ունեն թեմայի վերաբերյալ:

2

Եթե քո ուսանողներն իրենց անցյալում թմրամոլության կամ կյանքը կառավարող այլ խնդիրների հետ կապված դժվարություններ են ունեցել, հնարավոր է՝ դրանք խորտակել են նրանց վստահությունն անցյալի շատ փոխհարաբերությունների հանդեպ: Հետևաբար, այս թեման պետք է ավելի մանրամասն ուսումնասիրվի դասարանական այլ ձևաչափով: Բայց և այնպես, նրանք պետք է հասկանան, որ վստահությունը ակնթարթորեն չի գալիս, այլ կառուցվում է ժամանակի ընթացքում:

12. **Անձնական կիրառություն** (5-10 րոպե):

Անձնական կիրառության համար մենք նրանց ուզում ենք խնդրել, որ գրեն այնպիսի հանգամանքներ, որոնք դժվարացնում են ընկերություն զարգացնել իրենց հետ նույն տեղում ապրող մարդկանց, կամ այն եկեղեցու անդամների հետ, որտեղ նրանք մասնակցում են: Որից հետո թող գրեն մի գործողության մասին, որը նրանք կարող են անել ինչ-որ մեկի համար ավելի լավ ընկեր լինելու համար:

13. **Հանձնարարություններ:**

Ա. Դասաժամի վերջում հարցաշա՛ր տուր Փիլիպպեցիներին 4.8-ի վերաբերյալ:

Բ. Կախված այն բանից, թե քո ուսանողները ինչքանով են լավ հասկացել, թե ինչպես պետք է լրացնեն Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդը՝ «Ընկերության տարբեր տեսակներ», դու կարող ես նրանց լրացուցիչ օր տալ այդ աշխատանքն ավարտելու համար:

Գ. Բացատրի՛ր, որ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդը՝ «Սահմաններ ընկերության մեջ», պետք է ավարտված լինի նախքան հաջորդ դասաժամը:

Դ. Թող քո ուսանողները կարդան Ուսուցման ուղեցույցի 3-րդ գլուխը՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար: Նաև նրանց քաջալերի՛ր, որ մեկ անգամ ևս կարդան 2-րդ գլուխը՝ այսօրվա դասաժամին մեր քննարկած թեմաները վերանայելու համար:

14. **Դասի գնահատում:**

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.
Ինչպե՛ս կառուցել հիանալի ընկերություն

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Որպես ճշմարիտ քրիստոնյա՝ ես պետք է զարգացնեմ անձնական չափանիշներ, որպեսզի դրանցով առաջնորդվեմ մարդկանց հետ իմ փոխհարաբերությունների մեջ:

2. **Բանալի համար. Փիլիպպեցիներին 4.1.**

«Ուստի, իմ շատ սիրելի և կարոտալի եղբայրնե՛ր, իմ ուրախությունն ու պսակը, այսպես հաստատուն մնացե՛ք Տիրոջմով, սիրելինե՛րս»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 3-րդը՝ «Սահմաններ ընկերության մեջ», նույնպես կօգտագործվի այս դասի հետ:

4. **Դասի ջերմացման գործողություն** (2-3 րոպե):

Եթե դու հյուր ես հրավիրել, որպեսզի մասնակցի ձեր դասին, ապա դասը կարող եք սկսել՝ խնդրելով, որ նա իր կյանքից այնպիսի օրինակ բերի, որը կապ ունենա վերոնշյալ երեք թեմաներից մեկի հետ, որը մենք անցնելու ենք այսօրվա դասաժամին: Եթե հնարավոր է, թող նրանք մի պատկերավոր օրինակ ընտրեն, որը կապ ունի 1-ին՝ «Սկսի՛ր քեզնից» թեմայի հետ:

Մեկ այլ տարբերակ է կիսվելը, թե ինչպես ես դու ստիպված եղել փոփոխություններ անել քո կյանքում, երբ սկսել ես ընկերներ ձեռք բերել՝ որպես ճշմարիտ քրիստոնյա: Դու կարող ես խոսել դրական հետևանքների մասին, որոնք առաջանում են ընկերության վերաբերյալ Աստծո սկզբունքին հետևելու որոշումից: Կամ էլ կարող ես բացասական ընկերության օրինակ բերել, որն ուղղված կլինի այն բանին, որ դու կարիք ես ունեցել քո կյանքում փոփոխություններ կատարել ընկերներ ընտրելու հարցում:

5. **Ուսուցչի նախապատրաստություն դասի համար** (2-3 րոպե):

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլխում քննարկվում են երեք հիմնական թեմաներ: Դրանցից յուրաքանչյուրը կարող էր ինքնին առանձին դաս լինել, և եթե դու ժամանակի առումով ճկունություն ունես, կարող ես մտածել լրացուցիչ մեկ կամ երկու դասաժամ ավելացնելու մասին, որպեսզի այս նյութն ավելի մանրամասն անցնես:

3

Եթե դու սա անցկացնելու ես մեկ դասաժամում, ապա պետք է որոշես, թե որքան ժամանակ ես տրամադրելու երեք հիմնական թեմաներից յուրաքանչյուրին: Մեր առաջարկած դասի ծրագիրը կազմված է այնպես, որ ավելի քիչ ժամանակ հատկացնես Ա. բաժնի համար՝ 5-10 րոպե, և ավելի շատ՝ Բ. և Գ. բաժինների համար՝ 15-20 րոպե յուրաքանչյուրի համար:

Ինչ վերաբերում է նախորդ երկու դասաժամերին, ապա դու կարող ես հյուր հրավիրել՝ դասաժամին մասնակցելու համար, և գործնական կերպով օրինակներ բերել, թե ինչպես կարող են նրանք նշված թեմաները կիրառել իրենց կյանքում:

3

6. **Ներկայացրո՛ւ այսօրվա դասը** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 25-րդ:

Այսօրվա դասի վերնագիրը գովազդային չափազանցություն չէ, այն ճշգրիտ կերպով նկարագրում է այն ներուժը, որը քո ուսանողներից յուրաքանչյուրն ունի: Նրանք, իսկապես, կարող են հիանալի ընկերություն կառուցել: Բայց և այնպես, նրանք շատ բան ունեն սովորելու՝ նախքան իրոք կկարողանան ասել. «Ես հիանալի ընկերներ ունեմ Աստծո օրհնությամբ ու հավանությամբ»:

Նշի՛ր, որ այսօրվա դասաժամը վերաբերելու է երեք հիմնական թեմաների.

Ա. Սկսի՛ր քեզնից:

Բ. Ի՞նչ սահմանների կարիք ունեմ ես իմ փոխհարաբերությունների մեջ:

Գ. Ինչպե՞ս ընտրել ապահով ընկերներ:

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի գտնեն աստվածաշնչյան սկզբունքներ, որոնք կապ ունեն հիանալի ընկերություն կառուցելու հետ: Եթե նրանք վերջերս են դարձել ճշմարիտ քրիստոնյա, հնարավոր է՝ կարիք ունեն բազմաթիվ փոփոխություններ կատարելու իրենց կյանքում, երբ հարցը վերաբերում է ընկերներ ընտրելուն:

Քո ուսանողներին քաջալերի՛ր, որ իրենց համար նպատակ դնեն, որպեսզի հիանալի ընկերություն կառուցեն ըստ Աստծո սահմանման, ոչ թե ըստ իրենց սեփական սահմանման: Նրանք կարող են հեշտությամբ ընկնել ինքնախաբեության մեջ՝ մտածելով, որ տվյալ անձնավորությունը հիանալի ընկեր է՝ այն դեպքում, երբ Աստված կարող է լրիվ ուրիշ տեսակետ ունենալ այդ անձնավորության վերաբերյալ:

7. **Անցկացրո՛ւ Ա. կետը. «Սկսի՛ր քեզնից»**
(5-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 25-29-րդ էջեր:

Դասի այս հատվածն անցկացնելիս դու կարող ես նախապես որոշել, թե Ուսանողի ձեռնարկի այս բաժնի չորս կետերից որն է ավելի վերաբերում քո ուսանողներին այսօր: Հետո որոշի՛ր՝ արդյոք ուզո՞ւմ ես մի որոշ ժամանակ անցկացնել յուրաքանչյուր կետի վրա, թե՞ պարզապես ուզում ես կենտրոնանալ չորս կետերից ընդամենը մեկի վրա:

Ինչ էլ որ դու որոշելու լինես, անպայման ժամանակ հատկացրու՝ 4-րդ կետը քննարկելու համար, այն է՝ «Սովորի՛ր, թե ինչպես անկեղծորեն հոգ տանես մյուսների համար»: Բացատրի՛ր, թե ինչպես է Ա Կորնթացիներին 13:4-7 հատվածը վերաբերում իրենց կյանքի այս ասպարեզին:

Ահա մի քանի մտքեր, որոնք դու կարող ես օգտագործել այս չորս կետերն անցնելիս:

1. **Ի՞նչ բժշկություն է պետք քո կյանքում:**
(Ուսանողի ձեռնարկ, 26-րդ էջեր):

Կապված լինելով քո ուսանողների անցյալի հետ՝ սա կարող է շատ մեծ հարց հանդիսանալ: Եթե նրանց անցյալում բռնության դեպքեր են եղել՝ ֆիզիկական, զգացմունքային կամ սեռական, ապա դու կարող ես նրանց հետ հանդիպել դասաժամից դուրս, որպեսզի քննարկեք, թե ինչպես կարող են նրանք խորհրդատվություն անցնել՝ իրենց կյանքի այս ասպարեզում օգնություն գտնելու նպատակով:

Իրենց անցյալի այս ասպարեզը պարզապես անտեսելը բուժում չի բերի նրանց նոր փոխհարաբերություններում:

2. **Ինչքա՞ն ամուր է Հիսուսի հանդեպ քո նվիրվածությունը:**
(Ուսանողի ձեռնարկ, էջ 27-րդ):

Եթե ուսանողները խորապես նվիրված են Հիսուսին, և Նա գտնվում է նրանց կյանքի առաջին տեղում, և նրանք ցանկանում են, որ ընկերներ ընտրելիս Աստված իրենց առաջնորդի, ուրեմն նրանք հիանալի ընկերություն ունենալու ճիշտ ճանապարհին են: Սակայն, հնարավոր է, որոշ ուսանողներ չուզենան իրենց կյանքի այս ասպարեզում վստահել Աստծուն և ցանկանան ինքնուրույն ընդունել իրենց որոշումները:

Դու կարող ես միանգամայն պարզ ասել նրանց, որ եթե իրենք իրենց կյանքի այս ասպարեզը չհանձնեն Աստծուն, ապա ամենայն հավանականությամբ նրանք ապագայում շատ գլխացավանքներ կունենան: Երբ մենք մտածում ենք, որ ավելի լավ գիտենք, քան Աստված, ուրեմն կընկնենք փորձանքների մեջ:

3

3. **Որքա՞ն հասուն ես դու:** (Ուսանողի ձեռնարկ, էջ 27-29-րդ):

Այս հարցը, որ ներկայացված է որպես այս կետի վերնագիր, այն բանի համար չէ, որ ուսանողները փորձեն ինքնուրույն պատասխանել: Ուրեմն ի՞նչ է պետք, որպեսզի նրանք ի վիճակի լինեն ճշգրիտ պատասխանել այս հարցին:

Մի տարբերակն այն է, որ կարելի է ունենալ մի քանի օբյեկտիվ չափանիշներ, որոնք կօգնեն այդ գնահատման հարցում: Ուսանողի ձեռնարկի 28-րդ էջում նշված գիրքը՝ «The Life Model: Living from the Heart Jesus Gave You», հրաշալի գործիք է դրա համար: Այն շատ օգտակար միջոց է՝ գնահատելու համար տվյալ անձնավորության հասունությունը՝ անկախ նրա կենսաբանական տարիքից:

Քո ուսանողներին քաջալերի՛ր, որ փոխհարաբերություններ զարգացնեն այնպիսի անձնավորության հետ, ով կարող է իրենց համար խնամակալի դեր ստանձնել և առաջնորդել իրենց կյանքի այս ասպարեզում:

4. **Սովորի՛ր անկեղծորեն հոգ տանել մյուսների համար:** (Ուսանողի ձեռնարկ, էջ 29-րդ):

Քո ուսանողները պետք է հեշտությամբ ընկալեն այս կետի հիմունքային ճշմարտություններն անցնելը, սակայն դրանց կիրառումը կարող է շատ ավելի դժվար լինել: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի փնտրեն մարդկանց, ովքեր անկեղծորեն հոգ կտանեն նրանց համար՝ իրենք էլ, սակայն, լինելով տվող: Նրանք պետք է անկեղծորեն հոգ տանեն մյուսների համար:

Ա Կորնթացիներին 13:4-7 հատվածը ներկայացնում է գործնական ձևերի մի ցուցակ, թե ինչպես նրանք կարող են անկեղծ հոգատարություն ցուցաբերել մյուսների հանդեպ: Կան բազմաթիվ այլ համարներ, որոնք նույնպես կարող են օգտագործվել այս կետում:

8. **Ներկայացրո՛ւ Բ. կետը. «Ի՞նչ սահմանների կարիք ունեմ ես իմ փոխհարաբերությունների մեջ»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 29-30-րդ էջեր:

Սահմանների մասին այս բաժինն անցնելիս մատնանշի՛ր, որ սույն թեման ինքնին կարող էր մի ամբողջ դասընթաց լինել: Այն ծայրահեղ կարևորություն ունի առողջ, գործուն ընկերություն կառուցելու համար: Քո ուսանողներին հորդորի՛ր սահմանների մասին ավելին սովորել՝ կարդալով այս թեմայի վերաբերյալ John Townsend-ի և Henry Cloud-ի գրած գրքերը: Մի քանի վերնագրեր ներկայացված են Ուսանողի ձեռնարկի 30-րդ էջում:

9. Անցկացրո՛ւ Գ-1. կետը. «Ի՞նչ է սահմանը»
(4-8 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 30-33-րդ էջեր:

Քո ուսանողները, հնարավոր է, ծանոթ չլինեն «սահման» հասկացությանն իրենց կյանքում: Եթե նրանք արդեն անցել են *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի՝ ***Բարկություն և անձնական իրավունքներ*** (5-րդ խմբագրում) բաժինը, ապա նրանք համառոտ կերպով անցել են այս թեման:

Մեկ րոպե հատկացրո՛ւ՝ բացատրելու համար, թե ինչ է սահմանը. դա մի կանոն է կամ չափանիշ, որ դու ինքդ քեզ համար դնում ես ինչ-որ հարցում: Դու չես կարող սահմաններ դնել մյուսների համար, որ նրանք հնազանդվեն դրանց, դու սահմաններ դնում ես քո սեփական վարքի համար: Սրան այլ կերպ կարելի է անվանել՝ անձնական չափանիշներ, անձնական համոզմունքներ:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ երբ իրենք սահմանների մասին խոսում են մարդկանց հետ անձնական փոխհարաբերությունների համատեքստում, դրանք այնպես են ձևավորվում, որ մեզ օգնեն ապրելու այնպես, ինչպես Աստված է ուզում, որ մենք ապրենք: Բայց և այնպես, մարդը, հնարավոր է, այնպիսի սահմաններ դնի իր համար, որոնք ոչ մի կապ չունեն Աստծո ճշմարտության հետ, կամ դնի այնպիսի սահմաններ, որոնք միանգամայն հակառակ են Աստծո՝ աստվածաշնչյան ուսուցումներին: Մենք ուզում ենք համոզվել, որ քո ուսանողները հասկանում են, որ մենք չենք խոսում ինչ-որ տեսակի սահմանների մասին, այլ հատկապես այնպիսի սահմանների, որոնք փառք կբերեն Աստծուն՝ մարդկանց հետ մեր փոխհարաբերություններում:

Ուսանողի ձեռնարկի 31-33-րդ էջերում թվարկված չորս տեսակի սահմաններն անցկացնելիս հատուկ օրինակնե՛ր բեր դրանցից յուրաքանչյուրի համար, որպեսզի դրանք չմնան լոկ որպես տեսություն, այլ լինեն գործիքներ, որոնք նրանք կարող են այսօր օգտագործել իրենց փոխհարաբերություններում:

ա. Ֆիզիկական սահմաններ:

բ. Մտավոր սահմաններ:

գ. Զգացմունքային սահմաններ:

դ. Հոգևոր սահմաններ:

3

10. Անցկացրո՛ւ Բ-2. կետը. «Ինչպե՞ս կարող եմ սահմաններն օգտագործել իմ կյանքում» ու Բ-3. կետը. «Ուրեմն, որտեղի՞ց սկսեմ»
(8-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 33-36-րդ էջեր:

Դասի այս հատվածն անցնելիս հստակեցրո՛ւ, որ հնարավոր է՝ բոլոր ուսանողները ճիշտ նույն սահմանները չունենան: Ամուսնացած ուսանողները կունենան սահմաններ, որոնք տարբեր կլինեն չամուսնացած ուսանողների ունեցած սահմաններից:

Մենք սահմանների կարիք ունենք հատկապես այնտեղ, որտեղ թույլ ենք, որպեսզի դրանք օգնեն և պաշտպանեն մեզ մեր կյանքի այն ասպարեզներում, որտեղ մենք խնդիրներ ունենք մեր փոխհարաբերություններում: Դասի այս հատվածը այնպես է ծրագրված, որ նրանց մղի դեպի իրենց կյանքը ուշադիր զննելուն, որպեսզի սկսեն սահմաններ դնել այնտեղ, որտեղ կարիք ունեն:

Նրանց քաջալերի՛ր, որպեսզի սկսեն իրենց կյանքի այս ասպարեզում գրել սահմաններ, որոնց կարիքը նրանք ունեն մարդկանց հետ անձնական փոխհարաբերություններում:

Եթե նրանք փորձեն ապրել այս նոր սահմաններով, կտեսնեն, որ դժվար է մնալ այդ սահմանների մեջ: Եթե նրանք ձախողվեն, ասա՛ նրանց, որ չթողնեն այդ սահմանները, այլ գործի դնեն այն գործիքներն ու միջոցները, որոնք կարող են օգնել նրանց՝ հաջողակ կերպով ապրել այդ սահմանների մեջ:

1. Քաջալերի՛ր նրանց, որ ամեն օր նորից կարդան իրենց դրած սահմանները և նորոգեն իրենց որոշումը՝ այսո՛ր էլ անել առավելագույնը, որպեսզի ապրեն ըստ այդ սահմանների:
2. Խնդրիր Աստծուն, որպեսզի հիշեցնի նրանց, երբ հանդիպեն մի իրավիճակի, որտեղ կարող են կիրառել այդ սահմաններից որևէ մեկը:
3. Քաջալերի՛ր նրանց՝ համարներ անգիր անել, որոնք կապ ունեն այդ սահմաններից յուրաքանչյուրի հետ:
4. Քաջալերի՛ր նրանց՝ հաշվետու լինել ինչ-որ մեկին, ով կկարողանա ստուգել և տեսնել, թե արդյո՞ք նրանք ապրում են ըստ այդ նոր սահմանների:
5. Թվարկի՛ր մի քանի օգուտներ, որոնք նրանք կտեսնեն, եթե ապրեն ըստ այդ սահմանների:
6. Տոնե՛ք փոքր հաղթանակները: Այդ նոր սահմաններով ապրելը կարող է լուրջ մարտահրավեր լինել, այնպես որ տոնե՛ք յուրաքանչյուր փոքրիկ հաղթանակը: Յուրաքանչյուր նոր հաղթանակ համարե՛ք որպես ևս մեկ քայլ՝ դառնալու համար այն անձնավորությունը, որն Աստված է ուզում, որ դուք լինեք:

Քո կյանքից օրինակնե՛ր բեր, թե ինչպես ես դու սահմաններ դրել մարդկանց հետ քո անձնական փոխհարաբերություններում, և ինչպես են դրանք օգնել քեզ:

11. **Ներկայացրո՛ւ Գ. կետը. «Ինչպե՞ս ընտրել ապահով ընկերներ»** (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 36-րդ:

Դասի այս հատվածն ինքնին կարող էր մի ամբողջ դասընթաց լինել: Քո ուսանողներից շատերն այս թեմայի կարիքը շատ ունեն, բայց քիչ պատկերացում ունեն, թե ինչպես դա անել:

Հորդորի՛ր նրանց, որ կարդան Dr. Henry Cloud-ի և John Townsend-ի հեղինակած՝ «Safe People» գիրքը՝ այս թեմայի վերաբերյալ առավել տեղեկանալու համար: Գրքի հետ կա նաև աշխատանքային տետր անձնական կամ խմբային աշխատանքի համար:

12. **Անցկացրու Գ–1. կետը. «Ինչպե՞ս կողմնորոշվել, որ տվյալ մարդն ապահով անձնավորություն չէ»** (4-8 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 37-38-րդ էջեր:

Ձեր քննարկումն սկսի՛ր՝ բերելով ոչ ապահով մարդկանց վերաբերյալ մի քանի օրինակներ: Քո ուսանողները, հնարավոր է, իրենք էլ կարողանան նման օրինակներ բերել իրենց անձնական կյանքից: Դու կարող ես գրատախտակի վրա գրել ոչ ապահով մարդուն բնութագրող հատկանիշները:

Դու կարող ես նաև համապատասխանաբար ցուցակ կազմել, թե որոնք են ապահով մարդուն բնութագրող հատկանիշները: Մենք պետք է նրանց քաջալերենք, որ Աստծո Խոսքն օգտագործեն որպես հիմք, որպեսզի կողմնորոշվեն, թե արդյո՞ք տվյալ մարդն ապահով անձնավորություն է: Առակաց գիրքը պարունակում է բազմաթիվ զգուշացումներ՝ ոչ ապահով մարդկանց համար, և քաջալերանքներ՝ ընտրել որպես ապահով ընկեր այնպիսի մեկին, ում Աստված իմաստուն է համարում:

Ոչ ապահով անձնավորությանը սահմանելուց հետո ժամանա՛կ հատկացրու, որպեսզի քննարկես այն հարցը, որն այսօրվա բաժնի վերնագիրն է. **«Ինչպե՞ս կողմնորոշվել, որ տվյալ մարդն ապահով անձնավորություն չէ»:**

Համապատասխան օրինակնե՛ր բեր քո կյանքից, կամ ուրիշների կյանքից, որպեսզի օգնես քո ուսանողներին՝ տեսնել, թե ինչպես իրենք կարող են կողմնորոշվել, որ տվյալ մարդն ապահով անձնավորություն չէ:

Քաջալերի՛ր նրանց, որ սկսեն այս հարցը տալ, երբ որևէ մեկի հետ ցանկանան ընկերություն սկսել: Նրանք չպետք է սպասեն, որ ինչ-որ մեկը դառնա իրենց մոտիկ կամ մտերիմ ընկերը, հետո միայն սկսեն գնահատել, թե արդյո՞ք տվյալ մարդն ապահով անձնավորություն է: Սա ևս մեկ պատճառ է, թե ինչո՛ւ է կարևոր՝ դանդաղորեն զարգացնել նոր մարդկանց հետ

ընկերությունը, այլ ոչ թե մեկ օրում ցատկել մտերիմ ընկերության մակարդակին:

Մի անձնավորություն, որը ծայրահեղ կարիք է զգում մարդկանց հետ փոխհարաբերություններ ունենալու, կարող է այնքան տարված լինել ընդունված և սիրված լինելու ցանկությամբ, որ անտեսի փոխհարաբերությունների հնարավոր վտանգների վերաբերյալ նախազգուշացումները: Իսկ նրանք, ովքեր ոչ ապահով ընկերներ ընտրելու՝ կյանքի պատմություն ունեն, սա կարող է նրանց համար մի բաց տեղ լինել, որտեղ նրանք կարիք ունեն ավելի հասուն անձնավորության, ով կօգնի գնահատել հնարավոր ընկերներին, տեսնել, թե որքանով են նրանք ապահով:

3

13. **Անցկացրո՛ւ Գ-2. կետը. «Ինչո՞ւ եմ ես գրավում ոչ ապահով մարդկանց»** (4-8 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 38-39-րդ էջեր:

Այս հատվածի քննարկումն սկսի՛ր՝ քո ուսանողներին խնդրելով ներկայացնել իրենց մտքերն այս հարցի վերաբերյալ. «Ինչո՞ւ են որոշ մարդիկ շարունակ ընկնում վատ փոխհարաբերությունների թակարդը»:

Այս հարցը երկու կողմ ունի.

> Առաջին. Ո՞ւմ ես դու թույլ տալիս մտնել քո կյանք: Որոշ մարդիկ ընկերություն սկսելիս ընդհանրապես չեն զննում՝ կողմնորոշվելու համար, թե արդյո՞ք տվյալ մարդն ապահով անձնավորություն է:
>
> Երկրորդ. Որոշ մարդիկ իրենք գրավվում են ոչ ապահով անձնավորություններով: նրանց դուր է գալիս այն մարդկանց համարձակությունը և ոգևորությունը, ովքեր մի փոքր վատն են: «Ապահով մարդիկ ձանձրալի են»,- ասում են նրանք:

Քո ուսանողներին քաջալերի՛ր, որ լինեն այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված է ուզում, և Նրա հետ մտերիմ փոխհարաբերությունների մեջ ապրելը դարձնեն իրենց կյանքի առաջնահերթությունը:
Ընկերներ ընտրելիս նրանք պետք է տեղյակ լինեն, որ սատանան ամեն բան անում է, որպեսզի ընտրեն այնպիսի ընկերներ, որոնք նրանց կհեռացնեն Աստծո հետ ունեցած մտերիմ փոխհարաբերություններից:

Օգնի՛ր քո ուսանողներին հասկանալու, որ ոչ ապահով անձնավորությունները հաճախ փնտրում են այնպիսի մարդկանց, ովքեր խոցելի են թվում, ովքեր ինքնավստահության պակաս ունեն:
Ոչ ապահով մարդիկ փնտրում են այնպիսի մարդկանց, ովքեր փափագում են ընկերներ ունենալ, կամ ում իրենք կարող են շահագործել:

Ոչ ապահով մարդկանցից պաշտպանվելու լավագույն միջոցներից մեկն անձնական սահման դնելն է, որպեսզի դադարես տվյալ մարդու հետ շփվել, երբ հասկանաս, որ նա ապահով անձնավորություն չէ: Եթե քեզ թվում է, որ կարող ես «ուղղել» նրան, ուրեմն դու մի ուղի ես ընտրել, որը ամենայն հավանականությամբ փորձանքներ կբերի քո կյանքում:

14. Անցկացրո՛ւ Գ-3. կետը. «Ինչպե՞ս կարող եմ ապահով ընկեր ընտրել» (4-8 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 40-41-րդ էջեր:

Դասի այս հատվածն սկսի՛ր՝ քննարկելով այն երեք ցուցիչները, որոնք գտնվում են Henry Cloud-ի և John Townsend-ի «Safe People» գրքում:

1. Ավելի է մոտեցնում Աստծուն:
2. Ավելի է մոտեցնում մյուսներին:
3. Օգնում է մեզ լինել այն իրական անձնավորությունը, որին Աստված ստեղծել է, որ լինենք:

Քաջալերի՛ր նրանց, որ կարդան այս գիրքը՝ սույն թեմայի վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար: Ասա՛ նրանց, որ կարող են օգտագործել նշված երեք ցուցիչները՝ գնահատելու համար ցանկացած փոխհարաբերություն իրենք կյանքում: Սա պետք է լինի նրանց գլխավոր առաջնահերթությունն իրենց ընկերներին ընտրելիս:

Ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար նշված երեք ցուցիչներից յուրաքանչյուրը, և քո կյանքից օրինակներ բերելու, թե ինչպես ես դու այդ երեք ցուցիչներին համապատասխան ընկերություն սկսել: Քո ուսանողներից մի քանիսը ընկերներ ընտրելիս, հնարավոր է, երբևէ չեն օգտագործել այս երեք ցուցիչները, և հետևաբար սա կարող է նրանց համար անհնարին թվալ, որ գործածեն: Օգնի՛ր քո ուսանողներին՝ տեսնելու, որ նրանք էլ կարող են օգտագործել այս ցուցիչները, և Աստված նրանց կյանքում կբերի մարդկանց, ովքեր կարող են իրոք ապահով ընկերներ լինել նրանց համար:

15. Ներկայացրո՛ւ Գ-4. կետը. «Ի՞նչ պետք է ես անեմ, եթե ոչ ապահով անձնավորության հետ եմ շփվում» (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 41-42-րդ:

Դասի այս հատվածն անցնելիս դու կարող ես սույն քննարկումն անմիջապես բաժանել երեք տեսակի փոխհարաբերությունների.

1. Ոչ ապահով ընկերներ:
2. Ոչ ապահով բարեկամներ:
3. Ի՞նչ անել, եթե ամուսնացած ես ոչ ապահով անձնավորության հետ:

3

Հնարավոր է՝ նրանք տարբեր ձևով արձագանքեն այս կետերին: Նրանց համար կարող է շատ դժվար լինել այս բոլորը հասկանալը: Նրանք Աստծո իմաստության և համարձակության կարիքն ունեն, որպեսզի արձագանքեն Աստծո ուզած ձևով:

Առաջին կետը՝ ոչ ապահով ընկերներ, կարող է ամենահեշտը լինել: Դու կարող ես հեշտությամբ հեռանալ տվյալ անձնավորությունից և ասել նրան. «Ես չեմ ուզում քեզ հետ որևէ փոխհարաբերություն ունենալ»:

Եթե դու ունես ոչ ապահով բարեկամներ, ապա դա կարող է ավելի խնդրահարույց լինել: Տարբերակներից մեկը պարզապես նրանցից հեռու մնալն է և նրանց քո կյանքից հեռու պահելը: Սակայն սա միշտ չէ, որ հնարավոր է: Եթե նույնիսկ տվյալ անձնավորությունը քո մոտիկ ազգականն է, միևնույն է, դու պատասխանատվություն ունես ինքդ քեզ պաշտպանելու, որպեսզի այս ոչ ապահով անձնավորությունը չկարողանա վնասել քո կյանքը:

Դու կարող ես ոչ ապահով կողակից ունենալու թեման վերջինը քննարկել, որովհետև ամենախնդրահարույցը դա է: Մեկ ուրիշ տարբերակ է՝ սկզբում անցնել ոչ ապահով մյուս փոխհարաբերություններին վերաբերող հարցերով, որոնք բարձրացված են Ուսանողի ձեռնարկում, իսկ հետո վերադառնալ նշված թեմաներից յուրաքանչյուրին, որոնցից մեկն էլ վերաբերում է ոչ ապահով կողակից ունենալուն:

16. Անցկացրո՛ւ Գ-4-ա. կետը. «Անկե՛ղծ եղիր ինքդ քեզ հետ» (2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 42-րդ:

Ամենամեծ մարտահրավերներից մեկը, որ քո ուսանողները կարող են ունենալ, իրենք իրենց հետ անկեղծ լինելն է: Նրանք պարզապես կարող են անտեսել ոչ ապահով փոխհարաբերությունների վերաբերյալ զգուշացումներն ու կուրորեն մտնել այդ փոխհարաբերությունների մեջ: Նրանք կարիք ունեն ոչ ապահով անձնավորության հատկանիշների վերաբերյալ հստակ ցուցակ ունենալու և որոշելու, որ անկեղծ են լինելու իրենք իրենց հետ՝ իրենց ընկերների և ապագա ընկերների հարցում:

Փորձի՛ր օգնել քո ուսանողներին՝ խորհելու, թե ինչ հետևանքներ կլինեն, եթե նրանք հետևեն տվյալ փոխհարաբերությանը հետագա 5 տարիների ընթացքում, կամ հետագա ողջ կյանքում:

Նրանք, հնարավոր է, ավելի հասուն անձնավորության կարիք ունենան, ով կօգնի նրանց՝ գնահատել, թե արդյո՞ք իրենց ունեցած փոխհարաբերություններն ապահով են:

17. Անցկացրո՛ւ Գ-4-բ. կետը. «Խզել փոխհարաբերությունը»
(2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 43-րդ:

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի զգացմունքներով չկայացնեն ոչ ապահով որևէ փոխհարաբերություն խզելու որոշումը: Նրանք պետք է Աստծո ճշմարտությունն օգտագործեն որպես չափանիշ: Ոչ ապահով փոխհարաբերությունները խզելու վերաբերյալ համապատասխան օրինակնե՛ր բեր քո կյանքից կամ ուրիշի՝ ում դու գիտես:

Փոխհարաբերություններ խզելը, հնարավոր է, քո ուսանողների համար լինի ամենադժվարներից մեկը: Օգնի՛ր քո ուսանողներին, որպեսզի իմանան այն մի քանի հիմնական ռազմավարությունները, որոնք օգնում են ապահով կերպով խզել սխալ փոխհարաբերությունները:

1. Եթե դու տվյալ անձնավորության հետ հանդիպելու ես դեմ առ դեմ, ընտրի՛ր այնպիսի վայր, որտեղ մոտակայքում շատ մարդիկ կան, օրինակ՝ ռեստորանում:

2. Նախքան այդ վայրը հասնելը մտածի՛ր, թե ինչպես ես այնտեղից հեռանալու: Հաստատ իմացի՛ր, թե ուր ես գնալու այդ հանդիպումից հետո, և հույսդ մի՛ դիր այդ անձնավորության վրա, որպեսզի նա քեզ տանի այնտեղ, ուր ուզում ես գնալ դրանից հետո:

3. Աշխատի՛ր, որ այդ խոսակցությունը կարճ լինի: Կենտրոնացի՛ր թեմայի վրա՝ առանց երկար բացատրությունների: Պարզապես ասա՛ նրան, որ ձեր փոխհարաբերություններն ավարտված են: Քեզ պարտավոր մի՛ զգա նրան երկար բացատրություններ տալու, թե «ինչո՛ւ» ես ուզում վերջ դնել ձեր փոխհարաբերություններին: Երկար խոսակցության մեջ մտնելով՝ դու պարզապես հնարավորություն ես տալիս նրան՝ պատասխանել բոլոր այն պատճառներին, որոնք դու դնում ես նրա առաջ: Եթե նա հարցնի՝ ինչո՛ւ, պարզապես ասա՛, որ հետաքրքրված չես այդ մասին խոսելու, ասա՛ նրան, որ եթե ուզում է, կարող է խոսել քո եկեղեցու հովվի հետ:

18. Անցկացրո՛ւ Գ-4-գ. կետը. «Ոչ ապահով փոխհարաբերությունը խզելուց հետո»
(2-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 43-44-րդ:

Այս կետը քննարկելիս հստակեցրո՛ւ, որ քո ուսանողները հնարավոր է՝ զգան, որ իրենց զգացմունքները դեռ կապված են տվյալ ոչ ապահով անձնավորության հետ: Նրանք կարող են գայթակղություն ունենալ՝ վերանայել իրենց որոշումը և վերադառնալ նախկին փոխհարաբերություն: Բացատրի՛ր, որ սա բնական է: Մեր զգացմունքները կարող են փորձել մեզ նորից հետ տանել այն դրական բաներին, որոնք այդ ոչ ապահով անձնավորությունն ունի:

Սակայն մենք չենք կարող թույլ տալ, որ մեր զգացմունքները կայացնեն այս որոշումները: Նրանք պետք է Աստծո ճշմարտությո՛ւնն օգտագործեն որպես հիմք այս որոշումների համար, ո՛չ թե իրենց զգացմունքները:

Հորդորի՛ր նրանց, որ ուրիշ մարդկանց հետ չմտնեն տվյալ անձնավորության մասին բամբասանքի մեջ: Եթե ոմանք փորձեն վերականգնել նրանց փոխհարաբերությունները տվյալ անձնավորության հետ, ապա նրանք պետք է հաստատուն կերպով դեմ կանգնեն դրան: Հիշեցրո՛ւ քո ուսանողներին, որ նրանք պարտավոր չեն ուղղել ոչ ապահով մարդկանց:

3

Աստված նրանց կյանք կբերի ապահով ընկերներ: Ուղղակի պետք է հաստատուն կանգնել Աստծո այդ խոստման վրա: Ավելի լավ է՝ սպասել Աստծո ընտրությանը, քան նետվել ոչ ապահով ընկերության մեջ:

19. **Անցկացրո՛ւ Գ.-4-դ. կետը. «Իսկ եթե այդ ոչ ապահով անձնավորությունը բարեկամ է»** (3-8 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 44-րդ:

Տե՛ս, թե արդյո՞ք քո ուսանողներն ունեն բարեկամներ, որոնք կարող էին համարվել ոչ ապահով անձնավորություններ: Դու կարող ես օրինակներ բերել քո կամ մեկ ուրիշի կյանքից, ում գիտես, որ նման իրավիճակում է եղել: Նշի՛ր, որ այս փոխհարաբերությունները կարող են ավելի բարդ լինել:

Այս կետը քննարկելիս շատ որոշիչ է այն, թե ով է տվյալ բարեկամը: Եթե նա հեռու բարեկամ է և նույն տարածքում չի ապրում, ապա շատ ավելի հեշտ կլինի նման մարդկանց հետ ճիշտ վերաբերվելը: Սակայն եթե այդ ոչ ապահով անձնավորությունը նրանց հայրը կամ մայրն է, կինը կամ ամուսինը, ապա սա արդեն լրիվ ուրիշ իրավիճակ է:

Առաջինը. քո ուսանողների համար հստակեցրո՛ւ, որ նրանք Աստծուց տրված պատասխանատվություն ունեն՝ ապահովելու իրենց անվտանգությունը: Նրանք Սուրբ Հոգու տաճար են և չեն կարող թույլ տալ, որ շարունակ ենթարկվեն չարաշահման կամ բռնության լոկ այն պատճառով, որ այդ բռնացողն իրենց ընտանիքի անդամ է:

Եթե տվյալ ոչ ապահով անձնավորությունը մոտիկ բարեկամ է, ապա նրանք պետք է քննարկեն իրենց ունեցած տարբերակները: Սա մի գործողություն չէ, որը կարող է որոշվել դասաժամի ընթացքում: Հորդորի՛ր նրանց՝ քեզ հետ հանդիպել դասից դուրս, որպեսզի առանձին-առանձին կարողանաք ավելի մանրամասն քննարկել այդ հարցը:

Նրանք, հնարավոր է, կարողանան փոխհարաբերություն ունենալ որևէ ոչ ապահով անձնավորության հետ՝ ունենալով, սակայն, շատ հստակ սահմաններ դրա համար: Օրինակ, երբեք մենակ չմնալ տվյալ ոչ ապահով անձնավորության հետ: Եթե նրանք այդ անձնավորության հետ նույն վայրում են, միշտ ունենան հեռանալու տարբերակ, որպեսզի այդ ոչ ապահով անձնավորությունը չկարողանա վերահսկել նրանց:

Եթե այդ ոչ ապահով անձնավորությունը կռվարար ու վիճաբանող է, նրանք պետք է որոշեն, որ չեն ընկնելու այդ թակարդի մեջ:

20. **Անցկացրո՛ւ Գ.-4-ե. կետը. «Ինչպե՞ս վարվել նրանց հետ, ովքեր իմ ընկերներն էին, նախքան ես կդառնայի ճշմարիտ քրիստոնյա»** (2-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 44-45-րդ էջեր:

Քո ուսանողներին քաջալերի՛ր, որ մարդկանց հետ իրենց փոխհարաբերությունները տեսնեն ապագայի լույսի ներքո, ոչ թե անցյալի: Նրանք պետք է իրենց բոլոր ընկերների հետ ունեցած փոխհարաբերությունները հանձնեն Աստծուն և հարցնեն, թե ինչ է Նա ուզում, որ իրենք անեն այդ փոխհարաբերություններից ամեն մեկի դեպքում: Պետք է շարունակե՞ն տվյալ մարդու հետ ընկերություն անել, թե՞ խզեն այդ կապը: Եթե տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա չէ, ուրեմն նրանք պետք է լրջորեն մտածեն այդ կապը խզելու մասին, կամ էլ մի քայլ հետ գնան՝ մտերիմ ընկերությունը վերածելով սովորական ընկերության:

Լավ կլիներ, եթե դու կարողանայիր քննարկել, թե ինչ չափանիշներով նրանք կողմնորոշվեն՝ թե անցյալի ո՛ր ընկերությունը կարելի էր պահել, իսկ ո՛րը՝ ոչ:

21. **Դասի ամփոփում** (1-2 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 45-րդ:

Այս դասն ամփոփելով և պատրաստվելով անցնել այսօրվա անձնական կիրառությանը՝ քաջալերի՛ր քո ուսանողներին, որ հիշեն, որ Հիսուսն է ամենաապահով ընկերը, որ նրանք երբևէ կարող են ունենալ: Քաջալերի՛ր նրանց, որ աստվածաշնչյան հիմքով սահմաններ հաստատեն մարդկանց հետ իրենց փոխհարաբերությունների համար և որոշեն ընտրել ապահով մարդկանց՝ որպես իրենց ընկերների: Եթե նրանք բացահայտեն, որ փոխհարաբերության մեջ են ոչ ապահով անձնավորության հետ, ապա անմիջապես թող խզեն այդ կապը: Սակայն, ոչ ապահով անձնավորության հետ կապը խզելու լավագույն ժամանակը <u>նախքան</u> այդ փոխհարաբերությունը սկսելն է:

22. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Վերադարձի՛ր այսօրվա Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն ու Բանալի խոսք՝ քաջալերելով ուսանողներին աստվածաշնչյան հիմքով սահմաններ դնել մարդկանց հետ իրենց փոխհարաբերությունների համար: Դու կարող ես նրանց հորդորել՝ գրի առնել այդ սահմանները, իսկ հետո ամեն օր վերանայել դրանք և աղոթել, որ Աստված նրանց իմաստություն և ուժ տա այդ բոլորն իրենց կյանքում գործի դնելու համար:

3

23. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Մատթեոս 19:5-ի վերաբերյալ:

Բ. Եթե դեռ չես արել, դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի համար. «Ընկերության տարբեր տեսակներ»:

Գ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդի համար. «Սահմաններ ընկերության մեջ»:

Դ. Ասա՛ ուսանողներին, որ կարդան Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը՝ հաջորդ դասին նախապատրաստվելու համար:

Ե. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդը, 5-րդը և 6-րդը վերաբերում են այն նյութին, որը մենք կանցնենք հաջորդ դասին:

24. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4.
Սեռական փոխհարաբերություններ և քրիստոնեական կյանք

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես՝ որպես ամուսնացած (կամ չամուսնացած) մարդ, պետք է զգուշությամբ հետևեմ ճիշտ կյանք ապրելու վերաբերյալ Աստծո նկարագրությանը:

2. **Բանալի համար. Եփեսացիներին 5:15,17.**

«15. Ուստի նայեցե՛ք, որ զգուշությամբ քայլեք, ոչ թե անմիտների նման, այլ՝ իմաստունների: 17. Դրա համար էլ անմիտ մի՛ եղեք, այլ իմացե՛ք, թե ինչ է Տիրոջ կամքը»:

4

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդը, 5-րդը և 6-րդը նույնպես կօգտագործվեն այս դասի հետ:

Նախագիծ 4. «Ժամադրություն»:

Նախագիծ 5. «Ա Կորնթացիներին 7-րդ գլուխը և ամուսնությունը»:

Նախագիծ 6. «Ամուսնություն»:

4. **Ուսուցչի նախապատրաստություն դասի համար**:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխն ունի երեք հիմնական թեմաներ, որոնք կարող են քննարկվել այս դասաժամին:

Ա. Սեռական կյանքը և չամուսնացած մարդը:

Բ. Հանդիպել/Ընտրել այն անձնավորությանը, ում հետ պետք է ամուսնանաս:

Գ. Ամուսնություն:

Եթե դու լրացուցիչ դասի համար ժամանակ ունես, ապա կարող ես այս դասը բաժանել երկու կամ երեք դասաժամի: Եթե դա անցկացնելու ես մեկ դասաժամով, ապա պետք է կողմնորոշվես, թե որքան ժամանակ ես հատկացնելու այս երեք կետերից յուրաքանչյուրին:

Եթե դու ուսուցանում ես Թին Չելենջի կենտրոնում, քեզ համար լավ կլինի նայել, թե ինչպես են այս թեմաներն ուսուցանվելու մյուս դասերի ընթացքում: Մեկ դասաժամը չի կարող քո ուսանողներին սովորեցնել այն ամենը, ինչ նրանք կարիք ունեն իմանալու սեռական փոխհարաբերության, ժամադրության և ամուսնության վերաբերյալ: Կան բազմաթիվ այլ աղբյուրներ, որոնք կարող են այդ թեմաների վերաբերյալ օգտագործվել լրացուցիչ դասերի համար:

Youth With A Mission-ը (YWAM) հիանալի նյութեր ունի դրա վերաբերյալ: Դասընթացներից մեկը՝ «RELATIONSHIPS – The Key to Love, Sex, and Everything Else», հասանելի է նաև որպես DVD տարբերակ: www.ywampublishing.com

Այստեղ կան այդ թեմաներով՝ պատանիներին և երիտասարդներին թիրախավորող երկու գրքեր.

4

Dannah Gresh-ի «And the Bride Wore White: Seven Secrets to Sexual Purity» գիրքը և Bob Gresh-ի «Who Moved the Goalpost» գիրքը:

Շատ կան հիանալի գրքեր ժամադրության և ամուսնության վերաբերյալ: Դրանցից մեկը, որը որպես աղբյուր օգտագործվել է այս դասընթացի համար Walter Trobisch-ի «I Married You» գիրքն է: Դու կարող ես այս գրքի մի քանի օրինակներ դնել ձեր գրադարանում, որպեսզի քո ուսանողներն այն կարդան որպես այս դասընթացի մի մաս:

5. Դասի ջերմացման գործողություն (3-4 րոպե):

Տարբերակներից մեկն այն է, որ դասը սկսեն այն հարցերով, որոնք թվարկված են Ուսանողի ձեռնարկի 46-րդ էջում, որպեսզի ուսանողներն աչքի անցկացնեն դրանք և 0-10 թվերով գնահատեն, թե որքանով են հետաքրքրված այդ հարցերից յուրաքանչյուրով: Պետք է նշեն «10», եթե շատ են հետաքրքրված, և «0», եթե ընդհանրապես հետաքրքրված չեն: Նրանք կարող են 10 միավոր տալ մեկից ավելի հարցերի:

Այս հարցերը գնահատելու համար նրանց մեկ րոպե տալուց հետո դու կարող ես ուսանողներին խնդրել, որ քեզ հայտնեն, թե որ հարցով են նրանք ամենաշատը հետաքրքրված, որպեսզի քննարկեք:

Ասա՛ նրանց, որ մենք ժամանակ չենք ունենա այդ բոլոր հարցերը մանրամասնորեն քննարկելու համար:

6. **Ներկայացրո՛ւ այսօրվա դասը**
(1-3 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 46-47-րդ էջեր:

Այսօրվա դասաժամը սկսի՛ր՝ բացատրելով, թե ինչպես ես դու քննարկելու Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլխի երեք հիմնական թեմաները: Եթե դու չես պատրաստվում դասարանում քննարկել դրանցից մեկը կամ ավելին, պարզապես ասա՛ քո ուսանողներին, որ ինքնուրույն կարդան դրանք, և առանձին խոսեն քեզ հետ, եթե հարցեր ունենան դրանց վերաբերյալ:

Նշում ուսուցչի համար. Դասի ծրագրի մեջ առաջարկված ժամանակային սահմանափակումներն արված են այն նպատակով, որ որոշակի ժամանակ ծախսես երեք թեմաներից յուրաքանչյուրի վրա:

Ժամանակ առ ժամանակ, հնարավոր է, քո ուսանողներից ոմանք ցանկանան քննարկել իրենց անցյալ սեռական կյանքը: Թույլ մի՛ տուր, որ նրանք դրա շուրջ ծավալվեն: Եթե նման խնդիր առաջանա, ընդհատի՛ր նրանց:

4

7. **Անցկացրո՛ւ Ա.-1. կետը. «Ի՞նչ է ասում սեքսի մասին քո մշակույթը»**
(3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 47-49-րդ էջեր:

Այս կետի քննարկումը սկսելիս հարցրո՛ւ, թե քանիսն են քո դասարանում ամուսնացած, իսկ քանիսը՝ ոչ: Ասա՛ նրանց, որ թեև այս բաժինը վերնագրված է՝ «Սեռական փոխհարաբերությունները և չամուսնացած մարդը», այնուամենայնիվ թեման շատ օգտակար կլինի նաև ամուսնացած ուսանողների համար:

Քննարկի՛ր, թե ինչ ուղերձներ ունի ձեր մշակույթը սեքսի վերաբերյալ. ֆիլմեր, ընկերներ, համացանց: Միշտ չէ, որ մշակութային նորմերը համընկնում են այն բանի հետ, ինչ Աստված ասում է Աստվածաշնչում:

Քննարկե՛ք Հռոմեացիներին 12:1-2-ում ներկայացված գաղափարը: Թարգմանություններից մեկն ասում է, որ մենք չպետք է թույլ տանք, որ աշխարհը մեզ ձևավորի իր նմանությամբ: Ուսանողի ձեռնարկի 48-րդ էջում աստվածաշնչյան հատվածը մեջբերված է Աստվածաշնչի TBS ժամանակակից թարգմանությունից: Այն կարելի է հասկանալ նաև, որ մենք չպետք է թույլ տանք, որ աշխարհը մեզ ներքաշի իր «ոչ հասուն» վիճակի մեջ: Սա հրաշալի ձևով նկարագրում է սեքսի վերաբերյալ մեր մշակույթի ոչ հասուն տեսակետը:

8. Անցկացրո՛ւ Ա.-2. կետը. «Ինչպիսի՞ն է սեռական փոխհարաբերությունների վերաբերյալ քո ընտանիքի պատմությունը»
(3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 49-50-րդ էջեր:

Եթե քո ուսանողների համար հարմար է, կարող են կիսվել, թե տարիների ընթացքում ինչ ուղերձներ է իրենց ընտանիքն իրենց հաղորդել սեռական փոխհարաբերությունների վերաբերյալ:

Գուցե նրանք մեծացել են հոգևոր ընտանիքում, որտեղ նրանց սովորեցրել են սեռական կյանքի վերաբերյալ աստվածաշնչյան չափանիշներ:

Գուցե նրանց ծնողները ամուսնալուծված են եղել: Եթե այո, ի՛նչ ազդեցություն է դա ունեցել նրանց վրա:

Դու կարող ես ընտանեկան կյանքի տարբեր օրինակներ դիտարկել, թե ինչպես են այդ ընտանիքներում սեռական կյանքի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ եղել:

4

Գլխավոր միտքը, որ ուզում ենք դասի այս հատվածից վերցնել, այն է, որ ընտանեկան պատմությունը չպետք է ինքնըստինքյան ընդունվի որպես լավագույն օրինակ մեր ապագայի համար: Մենք պետք է մեր ընտանիքի պատմությունը ստուգենք այն բանով, թե ինչ է ասում Աստվածաշունչը սեռական փոխհարաբերությունների մասին: Մենք դրա մասին կխոսենք այս դասաժամին՝ ավելի ուշ:

9. Անցկացրո՛ւ Ա.-3. կետը. «Ի՞նչ է սեռական ազատությունը»
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 50-53-րդ էջեր:

Դասի այս հատվածը կարող է բավականին հակասական լինել՝ կախված քո ուսանողների մոտեցումներից: Քննարկման սկզբում դու կարող ես քո ուսանողներին հարցնել, թե ինչպես են իրենք սահմանում սեռական ազատությունը: Դա կարող է քեզ օգնել, որպեսզի հասկանաս, թե ինչի վրա կարիք կա կենտրոնանալ այս դասաժամին:

Երբ քո ուսանողները հայտնեն իրենց սահմանումը սեռական ազատության վերաբերյալ, խոսի՛ր նրանց հետ սեռական ազատության վերաբերյալ Աստծո սահմանման մասին:

Ուսանողի ձեռնարկի 51-րդ էջերում կա սեռական կյանքի մի սահմանում, որը փորձում է Աստծուն տեսնել այդ սահմանման մեջ:

Սեռական ազատություն. դա ազատություն չէ՝ քո ընկերուհու (ընկերոջ) կամ կնոջ (ամուսնու) հետ անել այն, ինչ ցանկանում ես: Սեռական ազատությունը կարողություն է՝ քո ընկերուհու (ընկերոջ) կամ կնոջ (ամուսնու) հետ անել այն, ինչ ճիշտ է: Դու այս հասկացողությունն ու կարողությունը կարող ես ստանալ Աստծուց և Նրա Խոսքից՝ Աստվածաշնչից:

Բացատրի՛ր, թե որքան տարբեր է այս սահմանումը այն մեկից, որ մեր մշակույթը կտար սեռական ազատությանը:

Սեռական ազատության վերաբերյալ երկրորդ հատվածը կապ ունի քո ուսանողների սեռական ինքնության հետ: Այսօր շատ կան մշակույթներ, որտեղ երիտասարդներին քաջալերում են տարբեր տեսակի սեռական հարաբերություններ փորձել և բացահայտ կերպով հետազոտել համասեռամոլ փոխհարաբերությունները:

Մատնանշի՛ր, որ Աստված բացահայտ ասում է, որ մենք բոլորս՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, ստեղծվել ենք Աստծո պատկերով: Մենք պետք է ընդունենք մեր մարմինն այնպիսին, ինչպիսին Աստված է մեզ տվել, և թույլ չտանք, որ մեր մշակույթն իշխի մեր կյանքի այս ասպարեզում:

Սեռական գայթակղությունները շատ մարդկանց համար սովորական են, սակայն բոլորն էլ նույն գայթակղությունները չեն ունենում: Ոմանք կարող են նույնասեռ փոխհարաբերությունների գայթակղություն ունենալ: Սա չի նշանակում, որ նրանք համասեռամոլ են ծնվել, սա նշանակում է, որ սատանան նրանց գայթակղում է՝ գնալ մի ճանապարհով, որը խախտում է Աստծո օրենքները: Սատանան խաբեբա և ստախոս է: Նա միշտ փորձում է մոլորեցնել մեզ և շփոթություն բերել մեր կյանքում:

Եթե մարդը գողանալու գայթակղություն է զգում, չպետք է ընդունի այդ միտքն ու ասի. «Աստված ինձ ստեղծել է, որ գողանամ մյուսներից: Գողություն անելն ինձ համար նորմալ է, որովհետև Աստված ինձ այդպիսին է ստեղծել»:

10. **Անցկացրո՛ւ Ա.-4. կետը. «Ո՞րն է Աստծո չափանիշը չամուսնացած մարդու համար»** (3-4 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 53-54-րդ էջեր:

Դասի այս հատվածը քննարկելիս քաջալերի՛ր նրանց, որ հետազոտեն, թե ինչ է Աստված ասում ամուսնության և չամուսնացած կարգավիճակի մասին: Դու այստեղ քննարկման համար կարող ես օգտագործել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը, որը հետազոտում է, թե ինչ է ասում Ա Կորնթացիներին 7-րդ գլուխը չամուսնացած մարդկանց և սեռական փոխհարաբերությունների մասին: Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ կան նաև այլ համարներ, որոնք խոսում են սեռական կյանքի և չամուսնացած մարդու մասին:

Մատնանշի՛ր, որ Աստծո չափանիշներից մեկը չամուսնացած մարդու համար այն է, որ նրանք մինչև ամուսնանալը կույս մնան: Այսօր շատ մշակույթներում այս չափանիշը դիտվում է որպես բացարձակ անիրատեսական և հետամնաց: Քո ուսանողներին քաջալերի՛ր՝ իրենց համար որպես չափանիշ օգտագործել ոչ թե իրենց մշակույթը, այլ՝ Աստծո Խոսքը:

4

11. **Անցկացրո՛ւ Ա.-5. կետը. «Որոշո՛ւմ կայացրու՝ ապրել սեռական մաքրության մեջ»** (3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 54-55-րդ էջեր:

Մի՛ խնդրիր, որ ձեռքերը մեկնեն բարձրաձայնելու համար, բայց հնարավոր է, որ քո ուսանողներից ոմանք արդեն սեռական ակտիվ կյանք ապրել են: Այս կետն անցկացնելիս քաջալերի՛ր նրանց, որ որոշում կայացնեն, որ այդ օրվանից սկսած սեռական մաքրության մեջ են ապրելու: Նրանք չեն կարող փոխել անցյալը, սակայն կարող են իրենց մնացած ողջ կյանքն ըստ Աստծո չափանիշների ապրելու որոշում կայացնել:

Բացատրի՛ր նրանց, թե ինչպես Հիսուսը վերաբերվեց այն կնոջ հետ, ում բռնել էին շնության մեջ: Հովհաննես 8:10-11-ում Հիսուսը նրան ասում է, որ չի մեղադրում նրան, սակայն նա պետք է գնա և այլևս մեղք չգործի: Հիսուսը նրան նոր կյանք, սեռական իմաստով՝ մաքուր կյանք ապրելու կոչ է անում:

4

Հիսուսը կների նրանց անցյալի մեղքերը, եթե նրանք խոստովանեն դրանք: Նա կարող է նրանց համար բերել մեկին, ով ապահով և աստվածապաշտ կյանքի ընկեր կլինի, այնպիսի մեկին, ով նույնպես ապրում է ըստ Աստծո չափանիշների:

12. **Ներկայացրո՛ւ Բ. կետը. «Հանդիպել/Ընտրել այն անձնավորությանը, ում հետ պետք է ամուսնանաս»** (3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 55-56-րդ:

Կախված այն բանից, ունե՞ս դու ամուսնացած ուսանողներ քո դասարանում, թե՞ ոչ, որոշի՛ր, թե որքան ժամանակ ես հատկացնելու այս հատվածին: Նույնիսկ եթե շատերն են ամուսնացած, դու, այնուամենայնիվ, կարող ես որոշակի ժամանակ հատկացնել այս թեմային: Ուսանողի ձեռնարկի 58-61-րդ էջերում ներկայացված պատկերավոր օրինակը կարող է կիրառվել ոչ միայն ժամադրության փոխհարաբերության, այլև բոլոր տեսակի փոխհարաբերությունների համար:

Կողակից ընտրելու մշակութային ձևերը տարբեր երկրներում տարբեր են: Այնպես որ դու կարող ես այս թեմաներից մի մասի վերաբերյալ հաղորդել տարբերակներ, որոնք գուցե քննարկված չեն Ուսանողի ձեռնարկում:

Այս դասի կարևոր նպատակն այնքան այն չէ, որ ուսումնասիրեք ժամադրվելու վերաբերյալ ձեր մշակութային ձևը, այլ ավելի շուտ հասկանալն է աստվածաշնչյան սկզբունքները, որոնք Աստված տվել է կյանքի այս ամենակարևոր որոշման համար:

13. Անցկացրո՛ւ Բ.-1. կետը. «Ո՞րն է ժամադրության նպատակը»
(3-4 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 56-57-րդ էջեր:

Դասի այս կետը քննարկելիս օգնի՛ր նրանց՝ հենց սկզբից նկատի ունենալ, որ ժամադրությունն անկեղծ փոխհարաբերություն զարգացնելու համար է: Դա սեռական կյանքի փորձ ձեռք բերելու համար չէ: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի իրենց կյանքի այս ասպարեզը հանձնեն Աստծուն և փնտրեն Նրա առաջնորդությունը այն առումով, թե ո՛ւմ հետ և ե՛րբ պետք է սկսեն ժամադրվել:

Ժամադրության վերաբերյալ շեշտադրի՛ր երկու հանգամանքներ, որոնց մասին գրված է Ուսանողի ձեռնարկի 56-րդ էջում: Դրանք են.

ա. Սովորել սեր տալ և ստանալ, հատկապես՝ ագապե սերը՝ Աստծո սերը:

բ. Դու պետք է երկուսիդ էլ հնարավորություն ընձեռես Աստծուն ավելի մոտենալու համար:

4

14. Անցկացրո՛ւ Բ.-2. կետը. «Ե՞րբ է անձնավորությունը պատրաստ ժամադրություն սկսելու համար»
(2-4 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 57-58-րդ էջեր:

Այս կետի քննարկումն սկսելիս քո ուսանողներին խնդրի՛ր կարծիքներ հայտնել սույն հարցի վերաբերյալ: Ոմանց համար չափանիշը տարիքն է՝ ինչպես նրանց ծնողներն են նրանց սովորեցրել: Սակայն Ուսանողի ձեռնարկը մի քանի պատասխաններ է տալիս այս հարցին, որոնք կարող են միանգամայն տարբեր լինել նրանով , թե ինչպես են քո ուսանողները նախկինում մտածել:

Հատկապես կենտրոնացի՛ր բ. կետի **վրա՝ բ. «Երբ դու անձամբ կազմել ես չափանիշների քո ցուցակը (ժամադրության վերաբերյալ քո կանոնները)»:** Այս թեման կապի՛ր սահմանների թեմայի հետ, որը մենք քննարկեցինք 3-րդ գլխում:

Եթե քո ուսանողները նոր են դարձել ճշմարիտ քրիստոնյա, կամ Թին Չելենջի ծրագրում են, քաջալերի՛ր նրանց, որ միառժամանակ հետաձգեն ժամադրվելը: Որպեսզի, նախքան կսկսեն ժամադրվել, ավելի շատ կենտրոնանան իրենց անձնական աճի վրա՝ դառնալով այնպիսի անձնավորություն, ինչպիսին Աստված է ուզում:

15. **Անցկացրո՛ւ Բ.-3. կետը. «Որո՞նք են ժամադրության օգուտները»** (3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 58-59-րդ էջեր:

Դասի այս հատվածն անցնելիս կենտրոնացի՛ր Ուսանողի ձեռնարկի 58-րդ էջում բերված մտքին, որն ասում է, թե ինչպես սեր զարգացնել ժամադրության մեջ: Այս նույն աղյուսակը կարող է օգտագործվել նաև ամուսնացածների համար, որ ցույց տան, թե ինչպես կարող են նրանք ավելի խորը սեր զարգացնել միմյանց հանդեպ: Առանցքն Աստծուն ավելի մոտենալն է:



Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, **Նախագիծ 4-րդի 3-րդ հարցին. «Որո՞նք են ժամադրության օգուտները»:**

Հարցրո՛ւ նրանց. Որո՞նք են ժամադրության օգուտներն Աստծո տեսակետից:

16. **Անցկացրո՛ւ Բ.-4. կետը. «Որո՞նք են ժամադրության վտանգները»** (3-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 59-62-րդ էջեր:

Թող նրանք կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի 4-րդ հարցին: Նրանց պատասխանները պետք է ցույց տան, թե որքանով են լավ հասկացել ժամադրության վտանգները:

Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնարկի 59-րդ էջի երկու նկարագրությունները, որպեսզի ընդգծես, որ ոչ հավատացյալ անձնավորության հետ ժամադրվելը, ով չի փափագում Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություններ զարգացնել, կարող է վտանգավոր լինել նրանց հոգևոր կյանքի համար: Եթե նրանք շարունակում են ավելի մոտենալ Աստծուն, իսկ նա, ում հետ իրենք հանդիպում են, գնում է հակառակ ուղղությամբ, ապա նրանք ավելի կհեռանան իրարից, ոչ թե կմոտենան:



Եթե նրանք հետևեն մեկին, ով հեռանում է Աստծուց (նկարազարդում 2.), ապա իրենք էլ ոչ թե կմոտենան, այլ կհեռանան Աստծուց: Ցանկացած փոխհարաբերություն, որ նրանց հեռացնում է Աստծուց, կթալանի նրանցից այն ապագան, որն Աստված է ծրագրել նրանց համար:

Ժամադրության վտանգներից մեկն էլ այն է, որ նրանք կարող են սեռական ակտիվություն ունենալ նախքան ամուսնանալը: Ուսանողի ձեռնարկի 60-րդ էջի նկարազարդումը ցույց է տալիս, թե ինչ է տեղի ունենում, երբ զույգը սեռական հարաբերություն է ունենում նախքան ամուսնանալը: Դա նրանց համար պատնեշ է ստեղծում Աստծո հետ փոխհարաբերություն ունենալու պարագայում և նաև մեղքի զգացողության պատ է կառուցում միմյանց փոխհարաբերություններում:



Սեքսը չի ամրացնում չամուսնացած մարդկանց փոխհարաբերությունները: Եթե ինչ որ մեկը ձգտում է մինչև ամուսնությունը սեռական հարաբերություն ունենալ, դա հստակ նշան է այն բանի, որ տվյալ անձնավորությունը ապահով անձնավորություն չէ:

Մեկ այլ նկարագրդում, որը կարող է նրանց օգնել՝ բացատրելու համար փոխհարաբերություններ կառուցելու աստվածաշնչյան մոտեցումը, այս բուրգն է:



Փոխհարաբերություններ կառուցելու աստվածաշնչյան մոտեցումն ամուր հիմք ունի այս փոխհարաբերության աճի համար: Աշխարհիկ տեսակետն ընդունում է ճիշտ դրա հակառակը, որը մի հիմք է՝ ամրություն չունեցող և հեշտությամբ քանդվող:

17. **Ներկայացրո՛ւ Գ. կետը. «Ամուսնություն»**
(2-4 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 62:

Դասի այս հատվածն սկսելիս մատնանշի՛ր, որ մենք ընդամենը մի քանի բան կքննարկենք քո կյանքի այն ասպարեզից, որտեղ դու ավելի շատ աճելու կարիք ունես: Մատնանշի՛ր, որ լրացուցիչ դասընթացները նրանց կօգնեն առավել մանրակրկիտ ձևով հասկանալ իրենց կյանքի այս ասպարեզը: Այսօր մենք արագ կվերանայենք այս թեմայի միայն ամենակարևոր կետերը:

Մի՛ մտիր ամուսնալուծության և կրկնամուսնության վերաբերյալ մանրամասն քննարկումների մեջ: Ասա՛ նրանց, որ առանձին կպատասխանես այս թեմայի վերաբերյալ նրանց հարցերին: Եթե նրանք ուզում են դա քննարկել դասարանում, վերադարձի՛ր այսօրվա դասի Աստվածաշնչյան բանալի ճշմարտությանը:

Դասի այս հատվածի քննարկումը սկսի՛ր՝ անցնելով հաջողակ ամուսնություն ունենալու երեք կետերով, որոնք գրված են Ուսանողի ձեռնարկի 62-րդ էջում:

1. Աստծուն առաջին տե՛ղը տուր քո կյանքում:
2. Թո՛ւյլ տուր, որ Աստված ընտրի քո կողակցին:
3. Սիրով լցված քո ողջ սիրտը դիր՝ կազմելու համար քո կյանքի լավագույն ընկերությունը ոչ միայն այն դեպքում, երբ ժամադրվում ես, այլ նաև քո ամբողջ կյանքի ընթացքում:

Մատնանշի՛ր, որ ամուսնությունը մարդկանց համար եղել է Աստծո ծրագիրը՝ սկսած ամենաառաջին ընտանիքից՝ Ադամից ու Եվայից:

Նախորդ կետը՝ Բ. «Ժամադրվել/ընտրել այն անձնավորությանը, ում հետ ես ամուսնանալու եմ», կապի՛ր դասի այս հատվածի հետ: Մատնանշի՛ր, որ մենք այս ամենակարևոր որոշման մեջ Աստծուն ներգրավելու կարիք ունենք: Եթե քո ուսանողներից կան մարդիկ, ովքեր արդեն ամուսնացած են, հնարավոր է՝ նրանցից ոմանք ամուսնացել են նախքան հավատացյալ դառնալը: Մի կարևոր բան, որ այստեղ պետք է շեշտել, այն է, որ եթե նույնիսկ նրանք ժամանակին Աստծուն չեն ներգրավել տվյալ անձնավորության հետ ամուսնանալու որոշման գործընթացի մեջ, միևնույն է, Աստված չի ուզում, որ նրանք հիմա ամուսնալուծվեն և ուրիշի հետ ամուսնանան:

Քանի որ նրանք արդեն ամուսնացած են, Աստված կգործի նրանց փոխհարաբերությունների մեջ և կօգնի նրանց՝ սովորել, թե ինչպես կարող են իրենց ամուսնությունը հաջողակ դարձնել: Առաջարկի՛ր, որ կարող ես առանձին խոսել այն ուսանողների հետ, ովքեր իրենց անհատական հարցերն ունեն սույն թեմայի վերաբերյալ: Օրինակ, եթե քո ուսանողն ամուսնացած է մեկի հետ, ով նրա հանդեպ բռնություն է թույլ տվել կամ շահագործել, ի՞նչ է կարող է նա անել: Այսօրվա դասաժամն այն առիթը չէ, որ փորձեք լուծել այս տեսակի խնդիրները: Դրանց վերաբերյալ անհրաժեշտ է առանձին զրուցել:

18. Անցկացրո՛ւ Գ.-1. կետը. «Ինչպե՞ս կարելի է պատրաստվել հաջողակ ամուսնության համար» (3-6 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 63-64-րդ էջեր:

Այս հատվածի քննարկումն սկսի՛ր այնպես, որ առաջինը քո ուսանողները պատասխանեն այս հարցին: Ուսանողի ձեռնարկի 63-64-րդ էջում կան մի քանի առաջարկված պատասխաններ, սակայն ավելի լավ կլինի սկսել քո ուսանողների ունեցած մտքերից՝ պարզապես տեսնելու համար, թե ինչպես են նրանք ընկալում այս թեման:

4

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ հաջողակ ամուսնությունը ներառում է ավելին, քան ճիշտ կողակից ընտրելը: Այն նաև ներառում է ինքն իրեն նախապատրաստելը, որպեսզի լինի լավագույն կողակիցը իր կողակցի համար:

Քաջալերի՛ր նրանց, որ թույլ չտան, որ իրենց մշակույթը որոշի իրենց պատասխանն այս հարցին, այլ Աստծո Խոսքն օգտագործեն որպես հիմք իրենց պատասխանների համար:

19. **Անցկացրո՛ւ Գ.-2. կետը. «Ո՞րն է հաջողված ամուսնության Աստծո պատկերը»** (8-12 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 64-69-րդ էջեր:

Այս հարցի պատասխանն ամփոփված է ամուսնության վերաբերյալ երեք կետերում, որը հիմնված է Մատթեոս 19:5-ի վրա:

4

ա. Թողնել:

բ. Միավորվել քո կնոջ/ամուսնու հետ:

գ. Մեկ դառնալ:

Այս երեք թեմաներից յուրաքանչյուրի հիմնական կետերով անցնելիս համոզվի՛ր, որ նրանք հասկանում են դրանցից յուրաքանչյուրի աստվածաշնչյան հիմունքը: Հետո օրինա՛կ բեր քո կյանքից, կամ հրավիրի՛ր ամուսնացած անձնավորության, որը կարող է իր կյանքի փորձառությամբ կիսվել այդ ասպարեզներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Դու կարող ես հրավիրել թե՛ ամուսնուն, թե՛ կնոջը, որպեսզի միասին գան և կիսվեն իրենց տեսակետներով այս հարցի վերաբերյալ, որպեսզի քո ուսանողները կարողանան լսել պատմությունը երկուսի կողմից էլ:

Մատնանշի՛ր, որ Գ.-2.-ա-3. կետը՝ **«Թողնել «չամուսնացած մարդու» քո մտածելակերպը»** (Ուսանողի ձեռնարկ էջ 65-66.), հատուկ ուշադրության է արժանի: Երբ մարդն ամուսնանում է, պետք է նոր սահմաններ դնի այն հարցի վերաբերյալ, թե ինչպես է նա մտածելու մյուս կանանց ու տղամարդկանց վերաբերմամբ: Որպես չամուսնացած՝ նրանք ազատ կարող էին նայել որևէ անձնավորության և խորհել. «Արդյոք սա՞ է այն մարդը, ում հետ ես կցանկանայի ամուսնանալ»: Բայց հիմա, երբ նրանք արդեն ամուսնացած են, պետք է նոր սահման դնեն իրենց մտքերին և այլևս այդ ձևով չմտածեն:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ հաջողակ ամուսնությունը շարունակական լուրջ աշխատանք է պահանջում: Երկու կողմից էլ պետք է ջանասիրաբար աշխատեն միմյանց հանդեպ սեր և գնահատանք աճեցնելու համար:

Ընդգծի՛ր, որ ամուսնությունը նրանց կյանքի ամենակարևոր անհատական որոշումն է՝ Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություններ ունենալու որոշումից հետո:

20. Քննարկի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը՝ «Ա Կորնթացիներին 7-րդ գլուխը և ամուսնությունը» (3-8 րոպե):

Դու կարող ես այսօրվա քո դասին միահյուսել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը՝ **«Ա Կորնթացիներին 7-րդ գլուխը և ամուսնությունը»:** Այս հատվածում մանրամասնորեն քննարկվում են ամուսնության և միայնակության վերաբերյալ տարբեր հարցեր:

21. Ամփոփելով այս դասն ու դասընթացը:

Այս դասն ամփոփելով և պատրաստվելով խոսել այսօրվա համար անձնական կիրառության մասին, նորից շեշտադրի՛ր մարդկանց հետ անձնական փոխհարաբերությունների այս ասպարեզի կարևորությունը: Հիշեցրո՛ւ նրանց, որ Աստվածաշնչի երկու մեծագույն պատվիրանները կապ ունեն փոխհարաբերությունների հետ. առաջինը՝ Աստծո հետ, երկրորդը՝ մարդկանց, իսկ սերն այս փոխհարաբերությունների սիրտն է:

Նրանց քաջալերի՛ր, որ գործի դնեն այն բոլոր թեմաները, որոնք մենք այս դասընթացին քննարկեցինք: Նաև մատնանշի՛ր, որ այդ թեմաները պետք է ավելի մանրամասն ուսումնասիրվեն առաջիկա օրերի և ամիսների ընթացքում: Նրանք պետք է շարունակաբար, անընդհատ սովորեն անձնական փոխհարաբերությունների զարգացման այս գործընթացում, որը պատիվ է բերում Աստծուն:

22. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Ա. Այսօրվա անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ սեռական փոխհարաբերությունների վերաբերյալ Աստծո վերաբերմունքի զարգացման վրա: Նրանք, ովքեր ամուսնացած են, թող գրեն ձևեր, թե ինչպես կարող են սեր արտահայտել և այն զարգացնել իրենց ամուսնական կյանքում: Ընդգծի՛ր իրենց կողակցի հետ անկեղծ և բաց լինելու կարևորությունը:

Բ. Ինչպե՞ս կարող ես հոգևոր ձևով ժամադրություն կազմակերպել, որը կփառավորի Աստծուն: Դու կարող ես քո ուսանողների հետ ծրագրել այդ ժամադրությունը, և թե ինչպիսին այն պետք է լինի, երբ նրանք արդեն հավատացյալ են դարձել: Դա կարող է ներառել ոչ միայն այն, թե ինչ են նրանք անելու, այլ նաև սահմանները, որոնք նրանք չպետք է անցնեն ժամադրվելիս:

23. Հանձնարարություններ:

Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագծեր 4-րդի, 5-րդի և 6-րդի համար:

4

24. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 5.
Ստուգարք

1. **Ներկայացրո՛ւ հաջորդ դասը, որն անցնելու եք:**

   Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

   Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:

   Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Յուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:

   Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն եք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

2. **Ստուգա՛ր տուր այս դասընթացի համար:**

3. **Եթե դեռ չես արել, վերադարձրո՛ւ բոլոր հարցաշարերն ու նախագծերը, որոնք գնահատել ես:**

5

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք

Պատասխաններ

Դասընթացի վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն_____ **Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ**

Ամսաթիվ_____ **Ստուգարք, 5-րդ խմբագրում**

Դասարան_____ _____**Գնահատական**

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 3 միավոր):

Ցուցումներ: Դի՛ր ____X____, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր ____O____, եթե պատասխանը սխալ է:

1._____Սեռական հարաբերություններ ունենալը միշտ էլ դիմացինի հանդեպ սիրո դրսևորում է:

2._____Եթե դու ուզում ես նոր ընկերներ ունենալ, երբևէ չպետք է լսես նրանց ասածները:

3._____Աստվածաշնչի երկու մեծագույն պատվիրանները խոսում են սեքսի մասին:

4._____Աստվածաշունչն ասում է, որ ատես քո թշնամիներին, եթե նրանք քեզ ատում են:

5._____Լավ ընկերությունը պետք է հիմնված լինի սիրո վրա:

6._____Լավագույն ձևը պարզելու համար, թե արդյո՞ք դու քո նշանածի հետ երջանիկ կլինես, նրա հետ սեռական հարաբերություն ունենալն է նախքան ամուսնանալը:

7._____Աստված ուզում է, որ ամուսիններն ամուսնալուծվեն, եթե իրար չեն սիրում:

8._____Աստվածաշունչն ասում է, որ ինչ-որ մեկի հետ նախքան ամուսնությունը սեռական հարաբերություն ունենալը մեղք է:

9._____Լավ ընկեր լինելու համար դու պետք է սովորես տալ:

10._____Նոր անձնավորության հետ հանդիպելիս դու չպետք է նրան ընդունես այնպիսին, ինչպիսին նա կա:

11._____Հավատացյալները իրենց ընկերների կյանքում դրականը գտնելու պատասխանատվություն ունեն:

12._____Դու միշտ պետք է դիմացինին ասես իր բոլոր սխալների մասին, նույնիսկ եթե նա քո սովորական ընկերն է:

13._____Հավատացյալներն իրենց ընկերներին երբևէ քննադատելու իրավունք չունեն:

Ճիշտ-սխալ հարցեր *(շարունակելի):*

14._____Կինը պետք է իր երեխաներին ավելի շատ սիրի, քան իր ամուսնուն:

15._____Դու պետք է սահմաններ հաստատես մարդկանց համար, որպեսզի ենթարկվեն դրանց, եթե ուզում են քո ընկերը լինել:

Բազմակի ընտրությամբ հարցեր:

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և համապատասխան տառը դի՛ր դիմացի գծիկի վրա (յուրաքանչյուրը 2 միավոր):

1. _____Ես ամենաշատը պետք է այս տեսակի ընկերներ ունենամ.

Ա. Ծանոթներ,

Բ. Սովորական ընկերներ,

Գ. Մոտիկ ընկերներ,

Դ. Մտերիմ ընկերներ:

2. _____Ես ազատություն ունեմ՝ ուղղել այս տեսակի ընկերներին.

Ա. Ծանոթներ,

Բ. Սովորական ընկերներ,

Գ. Մոտիկ ընկերներ,

Դ. Մտերիմ ընկերներ:

3. _____Այս տեսակի ընկերությունը հիմնականում նկարագրվում է որպես ընդհանուր հետաքրքրություններ և զբաղմունքներ ունեցող ընկերություն.

Ա. Ծանոթներ,

Բ. Սովորական ընկերներ,

Գ. Մոտիկ ընկերներ,

Դ. Մտերիմ ընկերներ:

4. _____Այս ընկերությունը հիմնված է միմյանց բնավորությունը զարգացնելու վրա.

Ա. Ծանոթներ,

Բ. Սովորական ընկերներ,

Գ. Մոտիկ ընկերներ,

Դ. Մտերիմ ընկերներ;

Կարճ պատասխանով հարցեր:

1. Որո՞նք են երեք ցուցիչները (պայմանները), որոնք նկարագրում են ապահով փոխհարաբերությունը (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

   1._____

   _____

   2._____

   _____

   3._____

   _____

2. Որո՞նք են ըստ Աստվածաշնչի այն երեք չափանիշները, որոնք անհրաժեշտ են հաջողակ ամուսնություն ունենալու համար (Մատթեոս 19:5): Բացատրի՛ր, թե ինչ է դրանցից ամեն մեկը ներառում (12 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր):

   1._____

   _____

   Բացատրություն._____

   _____

   _____

   2._____

   _____

   Բացատրություն._____

   _____

   _____

   3._____

   _____

   Բացատրություն._____

   _____

   _____

3. Գրի՛ր 2 սահմաններ, որոնք կարող են քեզ օգնել՝ Աստծուն փառք բերող ընկերություն ունենալու հարցում (6 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր):

1._____

2._____

4. Ինչպե՞ս է ամուսնությունից առաջ տեղի ունեցած սեքսն ազդում տղամարդու և կնոջ փոխհարաբերության վրա (5 միավոր):

_____

_____

_____

_____

_____

5. Գրի՛ր անգիր համարները (14 միավոր):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
Ստուգարքի պատասխաններ
5-րդ խմբագրում

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր
(յուրաքանչյուրը 3 միավոր):

1. O սխալ
2. O սխալ
3. O սխալ
4. O սխալ
5. X ճիշտ
6. O սխալ
7. O սխալ
8. X ճիշտ
9. X ճիշտ
10. O սխալ
11. X ճիշտ
12. O սխալ
13. X ճիշտ

Էջ 2.

Ճիշտ-սխալ հարցեր

14. O սխալ
15. O սխալ

Բազմակի ընտրությամբ հարցեր
(յուրաքանչյուրը 3 միավոր):

1. Ա
2. Դ
3. Բ
4. Դ

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
Ստուգարքի պատասխաններ
5-րդ խմբագրում

Էջ 3.

Կարճ պատասխանով հարցեր:

1. Առաջարկվող պատասխաններ. (6 միավոր, յուրաքանչյուրը 2 միավոր).

    1. Ավելի է մեզ մոտեցնում Աստծուն:

    2. Ավելի է մեզ մոտեցնում մյուսներին:

    3. Օգնում է մեզ դառնալ իրական անձնավորություն՝ ինչպիսին Աստված է ուզում, որ մենք լինենք:

2. 12 միավոր. ամուսնության 3 բաժինների համար 2-ական միավոր և 2-ական միավոր յուրաքանչյուր բացատրության համար:

    Ամուսնության երեք բաժիններից յուրաքանչյուրի վերաբերյալ ներքևում գտնվող բացատրություններն <u>առաջարկվող պատասխաններ</u> են:

    Ա. <u>Թողնել.</u>
    — Թե՛ ֆիզիկապես, թե՛ զգացմունքային իմաստով:

    Ֆիզիկապես. օրինական ամուսնություն, առանձին ապրել:

    Զգացմունքորեն. ամուսնանալ ծնողների և Աստծո հավանությամբ:

    Մտավոր. թողնել «չամուսնացած մարդու» քո մտածելակերպը:

    Բ. <u>Միավորվել քո կնոջ/ամուսնու հետ</u> (սոսնձվել իրար).

    Ֆիզիկապես. միասին ապրել, ֆիզիկական սեր և հավատարմություն:

    Զգացմունքորեն. սովորել միմյանց սիրել խորը սիրով:

    Գ. <u>Մեկ դառնալ.</u>

    Ֆիզիկապես. սեռական փոխհարաբերություն:

    Զգացմունքորեն. ունենալ նույն մոտեցումները, կիսել ամեն բան՝ ուրախությունը, հույսը, սիրտը և այլն:

    Հոգևորապես. ունենալ նույն հոգևոր նպատակները, միասին ծառայել Աստծուն:

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
Ստուգարքի պատասխաններ
5-րդ խմբագրում

Էջ 4.

3. Անձնական պատասխաններ (6 միավոր, յուրաքանչյուրը 3 միավոր):

4. Առաջարկվող պատասխաններ (5 միավոր):

   --Դա խանգարում է Աստծո հետ իմ փոխհարաբերությանը:

   --Ես ինձ մեղավոր եմ զգում:

   --Դա մեղքի զգացողության պատ է կառուցում իմ և իմ ընկերուհու (ընկերոջ) միջև:

5. Գրի՛ր անգիր համարները (14 միավոր):

   Փիլիպպեցիներին 4:8

   Մատթեոս 19:5

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

դասընթացի ուսու ական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ

դասընթացի ուսու ական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցու երը, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____